№ 238 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1909

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 238

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Նոյեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 2 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Իսահակ, Յակոբ, Աբրահամ, Յովսէփ Գրիգորեանները և Աննա Մազայեանը, Լիզա, Աննա և Սիրանոյշ Գրիգորեանները, Յովհաննէս Յակոբջանեանն ու Արմենակ Մազայեանը յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինները իրանց բազմերախտ մօր, երկրորդները իրանց սիրելի սկեսուրի, իսկ վերջինները իրանց անմոռանալի զոքանչի՝

ԵՂԻՍԱԲԷԹ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ հոկտ. 25-ին: Ամբիծքը այսօր, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 6-ին: Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, հոկտ. 29-ին, հանգուցեալի բնակարանից (Մետեխսկի պեր., № 52) դէպի Կարմիր-Աւետարանի եկեղեցին, իսկ այնտեղից Խոջիվանքի գերեզմանատունը:

1160. 1—1

Երդուեալ-հաւատարմատարի
օգնական
Աղեքսանդր Պապովեանը
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
Вельяминовская ул., № 30.
(ա. օ.) (առ.) 1121. 10—5

Բ. Հ. Կ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ
ԿԱՆԱՆՑ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

աշակերտուհիների ընդունելութիւնը տակաւին շարունակվում է:

(օ.մ.) (առ.) 1143. 3—2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

II

Վերջին տարին մենք շատ առիթներ ունեցանք խօսելու Թիւրքահայերի հետ իրանց տնտեսական կեանքի բարեփոխութիւնների մասին:

Թիւրքահայերը ցոյց էին տալիս ընդարձակ հետաքրքրութիւն դէպի զանազան տեսակ բարւոքումներ: Եւ նրանց մէջ եղան մի որոշ թւով մարդիկ, որոնք գնեցին մեր երկրում գութաններ և ուրիշ գործիքներ, նոր բոյսերի սերմացուներ և տարան իրանց հետ հայրենիք:

Մի քանի անձեր մտադիր են նոյն իսկ մշտական գործակալութիւններ հաստատել՝ հայթայթելու նոր գործիքներ Թիւրքահայաստանի երկրագործներին:

Նկատվում են առաջադիմական ձգտումներ նաև արհեստագիտական կրթութիւն տարածելու Թիւրքահայաստանի գիւղերում: Պանդուխտներից մի քանիսը ներմուծեցին իրանց երկրի մէջ արհեստների վերաբերեալ մի քանի գործիքներ:

Այժմ հարց է ծագում՝ թէ ինչ միջոցների պէտք է դիմել, որպէսզի տնտեսական բարւոքումների ծրագիրները իրագործվեն կեանքի մէջ, դպրոցների բացումը չը յետաձգվի երկար տարիներով և կեանքի մարդիկ օգտվեն զանազան կատարելագործութիւններից:

Անշուշտ Վանի, Մուշի, Աղթամարի և այլ գիւղատնտեսական դպրոցների բացման համար անհրաժեշտ են նիւթական առատ միջոցներ և հմուտ ղեկավարներ:

Նիւթական ապահովութեան համար պէտք է հոգան թէ ինքը ժողովուրդը իր համախմբված ոյժով, թէ առանձին ունևոր անհատներ, որոնք կարող էին նուիրատւութիւններ անել այդ նպատակով, և թէ զանազան հաստատութիւններ, ինչպէս օրինակ ազգային ժողովի սնդուկը, Եգիպտոսում, Ամերիկայում և ուրիշ տեղերում գտնվող բարեգործական-կուլտուրական հիմնարկութիւնները:

Գիւղատնտեսական և արհեստագիտական կրթարանների հաստատման խնդիրը այն համակրելի խնդիրներից մէկն է, որի վերաբերութեամբ հայ մարդը պէտք է դիւրազգաց լինի և թոյլ չը տայ, որ օգտաւէտ և արդիւնարար հաստատութիւնները միան կեանքի մէջ չիրագործված միայն այն պատճառով, որ հասարակութիւնը զլացաւ իր րուբլիները տալու գեղեցիկ կուլտուրական նպատակի համար:

Դա յանցաւոր զանցառութիւն կը լինի, մանաւանդ աններելի այն պատճառով, որ Թիւրքահայաստանը վերջին տասնեակ տարիներում բոլորովին զրկված էր այդպիսի հաստատութիւնների բարերար ազդեցութիւնից:

Թիւրքահայաստանը տնտեսական զարգացման և ճոխ բարգաւաճման համար ունի բնական շատ բարենպաստ պայմաններ: Թէ սարաւանդներում և թէ հովիտներում կան բարեբեր հողերի ընդարձակ տարածութիւններ, որոնք կարող են ապրեցնել մի քանի անգամ աւելի խիտ ազգաբնակութիւն, քան ներկայումս ապրում է այնտեղ:

Դպրոցները մի կողմից, զանազան տեսակի ցուցադաշտեր միւս կողմից, ընկերակցական և մասնաւոր ձեռնարկութիւններ երրորդ կողմից, արդիւնագործական ցուցահանդէսներ, մրցահանդէսներ, խորհրդակցական համագումարներ չորրորդ կողմից, գործելով զուգընթաց, կարող են արթնացնել տեղական տնտեսութիւնը իր դարաւոր քնից և նրան տալ զօրեղ շարժում, որպէսզի նա կարող լինի թէ երկրի ժողովրդին կերակրել առատօրէն և թէ արդիւնաբերել մթերքներ՝ ուրիշ տեղեր արտահանելու համար:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկվա, 26 հոկտեմբերի

Հանդիսաւորութեամբ բացվեց Ռուսաստանի ժողովուրդների միութեան ընկերութեան բացումը: Վարչութեան անդամներ ընտրվեցին բոլոր ազգութիւնների ներկայացուցիչներից:

(Հ. Գ.)

Թաւրիզ, 26 հոկտեմբերի

Սէիդ-Հուսէյին-խանը, որ մի յօդուած էր տպել ի պաշտպանութիւն պարսկուհիների ազատագրութեան, դատապարտվեց 26 ամսով բանտարկութեան: (Հ. Գ.)

Մադրիդ, 26 հոկտեմբերի

Պաշտօնական լրագրի մէջ հրատարակված է թագաւորական հրամանը Բարսելօնա և Վերօնա նահանգներում սահմանադրական երաշխաւորութիւնների վերականգնման մասին: (Հ. Գ.)

Լիսաբօն, 26 հոկտեմբերի

Թագաւորը արտաքին գործերի մինիստրի ուղեկցութեամբ երէկ մեկնեց Սպանիայի և Անգլիայի թագաւորներին և ֆրանսիական հանրապետութեան նախագահին այցելելու համար:

Թագաւորի բացակայութեան ժամանակ երկիրը կը կառավարէ գահաժառանգը:

(Հ. Գ)

Վիեննա, 26 հոկտեմբերի

«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Կ. Պօլսից. «Բ. Դուռը Կրետէի հովանաւորող պետութիւններին մի նոտա ուղարկեց, որի մէջ, մատնանշելով Կրետէի դրութեան և Յունաստանի վերջին դէպքերի վրա, հրաւիրում է մեծ պետութիւններին վերջնականապէս կառավարական ձև սահմանել Կրետէի համար»: (Հ. Գ.)

Բուդապեշտ, 26 հոկտեմբերի

Երէկ տեղի ունեցան երկու քաղաքական ցոյցեր, որոնք երևան հանեցին, որ երկպառակութիւն է տիրում անկախների կուսակցութեան մէջ: Պալատի նախագահ պատգամաւոր Իւստը եկաւ կուսակցութեան 94 անդամների ուղեկցութեամբ իր ընտրողական շրջանը և ճառ արտասանեց, որի մէջ քննադատութեան ենթարկեց Կոշուտի օպպորտիւնիզմը, պահանջեց Ունգարիայի համար տնտեսական անկախութիւն, ինքնուրոյն բանկ և ընտրողական բարենորոգում, բայց ոչ հիմնված Անդրաշիի և Կոշուտի առաջարկած սիստեմով:

Երեկոյեան Բուդապեշտում կուսակցութեան 98 անդամների ներկայութեամբ տեղի ունեցաւ բանկետ ի պատիւ Կոշուտի: Սա իր ճառում ասաց, որ կը գերադասէր աւելի շուտ թողնել քաղաքական գործունէութեան ասպարէզը իբրև պարտութիւն կրած անձն, քան թէ հրաժարվել անկախութեան գաղափարից. բայց և այնպէս, գտնվելով կառավարութեան աթոռների վրա, անհրաժեշտ է հաշւի առնել այն պահանջները, որ առաջադրել է ներկայ դրութիւնը և ձգտել նպատակին հասնելու և ոչ թէ դէմ գնալ:

Կոշուտին և կոմս Ապօնիին բուռն օվացիաներ արին: (Հ. Գ.)

Բուխարեստ, 26 հոկտեմբերի

Ռումինական գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը՝ իբր զինւորական կօնվենցիա է կապվել Աւստրո-Ունգարիայի և Ռումինիայի միջև:

(Հ. Գ.)

Րիօ-դէ-Ժանէյրօ, 26 հոկտեմբերի

Արտաքին գործերի մինիստրը և Ուրագվայի դեսպանը ստորագրեցին մի համաձայնութիւն, որով Բրազիլիայի և Ուրագվայի սահմանը փոխվում է յօգուտ վերջինի: Մի քանի կղզիներ դառնում են նրա սեփականութիւն: Բրազիլիան, որ յարուցել էր սահմանները կանոնաւորելու հարցը, ոչ մի պահանջ վարձատրութեան մասին չառաջացրեց: (Հ. Գ.)

«Т. Л.»-ին հեռագրում են Բագուից հոկտեմբերի 25-ից.

Այսօր առաւօտեան Լէյտէսի նաւթային գործարանում, երբ բանւորների մեծ մասը բացակայում էր կիրակնօրեայ հանգստեան համար, անյայտ պատճառից հրդեհ ծագեց, որ միանգամից ահագին չափեր ընդունեց:

Ահագին գործարանը իր բոլոր շինութիւններով այրվեց պատրոյգի նման: Ոչ մի հնարաւորութիւն չը կար չէզոքացնելու հրդեհը: Կրակն անարգել առաջ է շարժվում և սպառնում է հարևան գործարաններին:

Վնասները ահագին են: Միմիայն ապահովագրական ընկերութիւնը պէտք է վճարէ մինչև 600 հազար րուբ. ապահովագրական գումար:

Ահագին տարածութիւնը գործարանային շէնքերով, նաւթապահեստներով և կայարաններով կրակի ճարակ դարձաւ:

Կրակի բոցից մարդ անկարող է լինում մօտենալ հրդեհին:

Այժմ երեկոյեան ժամը 5-ն է, իսկ հրդեհը շարունակվում է. նրան հանգցնելու ոչ մի հնարաւորութիւն չը կայ և նոյնիսկ անկարելի է պակասեցնել կրակի ոյժը:

Պետերբուրգ, 26 հոկտեմբերի

Մինիստրների խորհրդի նախագահ Պ. Ա. Ստոլիպինը մեկնեց Լիվադիա:

Հոկտեմբերեանները բանակցութիւններ են սկսել Պետական Դումայի աշխատանքների ծրագրի մասին: Ա. Գուչկօֆը առաջարկեց Պ. Միլիւկօվին պայմանական դատապարտութեան օրինագծից յետոյ քննել տեղական դատարանի օրինագիծը այն պայմանով, որ նրա յօդուածային քննութիւնը զուգընթացաբար ընթանայ կեանքի անձեռնմխելիութեան օրինագծի քննութեան հետ:

Մամուլին վերաբերեալ օրէնքը մինիստրների խորհրդում քննվելու է հերթից դուրս: Պետական Դումային այդ օրէնքը մտադրվում է յանձնել նոյեմբերի վերջերը: Նոր մամուլի օրէնք հրատարակելու հետ միասին միտք է ծագել ոչնչացնել 1905 և 1906 թ. թ. ժամանակաշրջանում լոյս տեսած հրատարակութիւնները. նախագծվում է նոյնիսկ ազատել այն դատապարտվածներին, որոնց պատիժը մի տարվայ բանտարկութիւնից կամ 1000 ր. տուգանքից բարձր չէ: Նախագիծը սակայն խիստ հակառակութեան է հանդիպում ղեկավար շրջաններում և քիչ շանսեր ունի իրականանալու:

Արդաբիլից հեռագրում են արտաքին գործերի մինիստրութեան, որ այնտեղի ռուսաց հիւպատոսարանը ոչ մի դէպքում չի կատարի թափառական ցեղերի պահանջը և չի յանձնի հիւպատոսարանում բաստ նստածներին: Այդ պատճառով կարելի է սպասել, որ յարձակում գործվի հիւպատոսարանի վրա, որ ունի մի հարիւրեակ կօզակներ երկու գնդակացիրներով: Շահսէվանների թիւը Արդաբիլում մօտ 4000 է: Ռուսաց կառավարութիւնը մտադիր է նրանց դէմ ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ.

(«Б.»)

Աթէնք, 26 հոկտեմբերի

Յունական զօրաբանակի մէջ անիշխանութիւն է տիրում: Զինւորները սպառնում են յեղափոխութիւն առաջ բերել: («Б.»)

Բերլին, 26 հոկտեմբերի

Լուրերին նայած, պետական կանցլերը հրաժարական է տալիս: («Б.»)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Ղազվին, 14 հոկտեմբերի

Հոկտեմբեր 13-ի երեկոյեան ժամը $6^1/_2$-ին Համադանից մի հեռագիր ստացվեց հետևեալ բովանդակութեամբ.

«Ահա երեք օր և երեք գիշեր է, որ մենք յեղափոխականներս կռւում ենք միապետականների դէմ. մեր բոլոր պաշարը վերջացել է և այս րօպէիս վատ դրութեան մէջ ենք գտնվում. օգնութիւն հասցրէք»:

Այստեղ պատրաստութիւն են տեսնում Համադանին օգնութեան հասնելու: Կողմնակի լուրեր են պատմում, թէ իբր Համադանի շրջակայ գիւղօրայքից միապետականները մեծ ոյժեր են ստացել և շարունակաբար ստանում են:

Կայծակ

II

Րաշտ, 20 հոկտեմբերի

Վերջերս այստեղ էլ ցոյց սարքվեց Ֆէրրէրի մահվան պատժի առիթով: Ցոյցին գլուխ էին անցել Կովկասից եկած յեղափոխականները:

Ցոյցին մասնակցում էին Րաշտի թէ մահմեդական և թէ քրիստոնեայ հասարակութիւնից:

Երեկոյեան ժամը $3^1/_2$-ին ցուցարարները առաջ խաղացին դէպի Սաբզի մէյդանը: Զինւորական երաժշտ. խումբը նուագում էր մահվան քայլերգը:

Սաբզի մէյդանում (որը մի ընդարձակ այգի է) կայացաւ միտինգ, որտեղ ընկերներից մէկը խօսեց, թէ ինչի համար է կազմակերպված ցոյցը:

Միտինգը վերջանալուց յետոյ, ցուցարարները վերադարձան Նախկին դատարանը, որտեղից և ցրվեցին մօտ ժամը 7-ին:

Վէմ

III

Էնզէլի, 25 հոկտեմբերի

Անցեալ օրը գրեցի, որ Սաթթար-խանը Արդաբիլում պաշարված է շահսէվաններից, որին օգնութեան են գնում Րաշտի յեղափոխականներից 200 հոգի:

Այսօր լուր ստացվեց, որ Սաթթար-խանը շահսէվանների ճնշման տակ յետ է նահանջել Արդաբիլից դէպի Թաւրիզ, իսկ քաղաքը մեծ թալանի և կոտորածի է ենթարկվել պաշարողների կողմից:

Հակայեղափոխականների բանակը Արդաբիլի շրջանում հաշւում են 15,000—20,000 հ. զինված նոր սիստեմի հրացաններով: Ինչպէս երևում է, այստեղը նման չէ Րաշտ-Ղազվին-Թէհրանին, այլ շատ լուրջ է դրութիւնը և յեղափոխականների կռիւը դժուարին, որովհետև առաջինը ձմեռ է:

Մուջահիդ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 14 հոկտեմբերի

Նախորդ թղթակցութեամբս արդէն գրել եմ Ադիլջեվազի գաւառակում 6 ուղևոր հայերի մորթված լինելու տխուր բօթը, որ նորից պատճառ տուեց սարսափներ առաջացնելու երկրում:

Նոր հասած ուղևորներ և նամակներ բերում են այս սոսկալի ոճրի մանրամասնութիւնները. ոճիրը պատահելիս, հէնց ոճրի վայրում—Ադիլջեվազում—գտնվում էր վալի Բէքիր - Սամի բէյ, պաշտօնական պտոյտի եկած լինելով: Ասում են, որ ոճիրը գործվել է ի հեճուկս նրա, փաստ տալու համար որ նա ապիկար, երկիրը կառավարելու շնորհից զուրկ է, որպէսզի առիթ լինի բողոքելու նրա դէմ ու պաշտօնանկելու:

Սպանված հայերը աղքատ, շրջիկ մանրավաճառներ են եղել: Նրանց հետ գտնվել են նաև երկու թիւրք մանրավաճառներ, բայց ոճրագործները, իմանալով որ նրանք իսլամներ են, բաց են թողել նրանց, կողոպտած իրերն էլ վերադարձնելով. իսկ 6 հայերին, կողոպտելուց յետոյ, մորթում են պարանոցներից, մարմինները յօշոտում և անյայտ տեղերում պահում, այնպէս որ մի քանի օրից յետոյ հազիւ գտնվում են և բերվում գաւառակի կենտրոնը եղող Արծկէ գիւղաքաղաքը, իսկ այնտեղից էլ նաւը դրվելով բերվեցին Վանի Աւանց նաւահանգիստը և այնտեղ թաղվեցին: Սպանվածներից երկուսը 12 տարեկան մանուկներ էին:

Վալին լուրջ միջոցներ ձեռք է առել ոճրագործները երևան հանելու համար. բայց հազիւ թէ այդ աջողվի, որովհետև նրանց հետ եղող թիւրք մանրավաճառները յայտնել են, որ չեն ճանաչում ոճրագործ քիւրդերին: Իսկ կայմակամը, որ մի զառամած, խուլ պաշտօնեայ է, չէ էլ հետաքրքրվում սպանութեան գործով, և երբ հայերը պնդում են, որ մօտակայ քիւրդ գիւղացիները պատասխանատւութեան հրաւիրէ, նա բղաւում է. «Ի՞նչ էք ուզում, ուզում էք բնաջինջ անել բոլոր քիւրդերի՞ն. դրանից վնասվողները կրկին ինքներդ էք լինելու. պէտք չէ զայրացնել քիւրդերին, եթէ ոչ, հալածվելիս, նրանք կը զայրանան և կրկին ձեզ հայերիդ կը կոտորեն»:

Թիւրք նկարագիրը ամեն տեղ միևնոյն է. չէ՞ որ հէնց այդպէս էր պատասխանում թիւրք մինիստրութիւնը ազգ. պատրիարքարանին, երբ սա պնդում էր Ադանայի ջարդի պատասխանատուները պատժելու անհրաժեշտութեան վրա:

Յիշեալ ոճրագործութիւնը սարսափ և անիշխանութեան պէս մի վիճակ առաջ բերեց Վանի վիլայէթում. նրան յաջորդեցին ուրիշ ոճրագործութիւններ էլ. մի սպանված հայ կնոջ դիակը գտնվեց դարձեալ Արծկէի ծովեզերքում, մի ուրիշ հայ սպանվեց Աբաղայի դաշտում. իսկ Նորդուզի գաւառում էլ Կանգվառ գիւղի և Ս. Հոգեաց վանքի 150-ի մօտ ոչխարները թալանվեցին: Կանգվառը այն գիւղն է, ուր անցեալ ապրիլ ամսում յայտնի աւազակ Միր-Մհէն 7 հայեր սպանեց և գիւղը թալանեց:

Տերակուտական շէյխ Աբդիւլ Կադէր, որի քաղաքս ժամանումը ծանուցել էի նախորդ թղթակցութեամբս, երազում է տեսնել մի բարեկարգված Թիւրքիա, ուստի ցաւում է, որ խժդժութիւններ են լինում հէնց իր ազգակից քիւրդերի ձեռքով: Նա հեռագրով իր մօտ կանչեց շրջակայ բոլոր քիւրդ ցեղապետներին և խօսեց նրանց հայրենիքի ապագայ շահերի անունից. ասաց, որ «երկրի բոլոր ժողովուրդները երբէ համերաշխ չը լինեն, եթէ երկրում խաղաղութեան փոխարէն տիրեն միշտ խռովութիւններ, շարունակվեն խժդժութիւններ, օտարը պատրւակ պիտի ունենայ միջամտելու, ինչպէս արվել է դրացի Իրանում, և մեր գեղեցիկ հայրենիքը փայ-բաժին է լինելու օտարին. զգուշացէք երկրի վրա հրաւիրելուց այդ դժբաղդ րօպէն»:

Աբդիւլ Կադէր խօսել է նաև հայերին և ուզեցել է իմանալ, թէ հայերը իրանց Թիւրք ու քիւրդ դրացիներից ինչ անբաւականութիւններ ունեն և ինչ պայմաններով յանձն են առնում հաշտուել նրանց հետ։ Հայոց ազգ. ժողովները և երեւելիները առաջարկել են շատ համեստ պայմաններ. իսկ շէյխն էլ յայտնել է, թէ, որչափ որ ինքը իմացել է, հայերի և նրանց դրացիների միջև եղած անբաւականութիւնների, դժգոհութիւնների պատճառ են տալիս արտասահմանից եկած ինքնակոչ առաքեալներ, որոնք որոմներ են ցանում։ Հայերը պատասխանել են, որ իրանք ոչ մի կապ չունեն նրանց հետ։

Բանակցութիւնները շարունակվում են և պիտի յանգեն երկուստեք գրաւոր պայմանագրութիւնների և վերջնական հաշտութեան կնքումի։ Յուսանք արդեօք, որ Ադիլջեվազի ոճիրը վերջին զոհը կը լինի հայրենեաց բագնի վրա։

Շէյխ Աբդիւլ Կադէր մի հայրենասէր քիւրդ է, 27 տարի աքսորի մէջ մնացած, և ցանկանում է տեսնել ազատ սահմանադրական բարեկարգված մի Թիւրքիա, ինչ որ հնարաւոր է տեսնում նրա բոլոր ազգաբնակութիւնների խաղաղ ու համերաշխ գործակցութեամբ։

Նահանգիս վալի Բէքիր Սամի բէյ մի արդարասէր մարդ է, անկեղծաբար ուզում է գործել անաչառութեամբ, բայց տեղացի մի քանի ազդեցիկ պաշտօնեաներ, ազգայնական հովերով տարված ու հայատեաց զգացումներ տածելով դէպի հայերը, ուզում են չէզոքացնել վալիի անկեղծ ջանքերը։ Աբդիւլ Կադէրին կաջողվի՞ արդեօք նրանց ուղեղների մէջ ներգործել ճշմարիտ հայրենասիրութեան առողջ գաղափարները, չենք իմանում. դժբաղդաբար մենք յուսահատ ենք դեռ. տհաս գաղափարները այլասերել են մեր նոր սերունդը, որ արտայայտվում է շատ վատ ու անզգոյշ կերպով։ Թիւրքերը այժմ մեզ համարում են անհաւատներ, քեաֆիրներ, իսկ քեաֆիրների հետ ոչ մի կերպով չէ կարող հաշտվել մուսուլման ժողովուրդը, որի մարգարէն պատուիրում է կոտորել քեաֆիրներին…

Մտրակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

I

Թիւրքահայ մամուլը ներկայումս վերին աստիճանի շահագրաւ և հետաքրքրաշարժ տեսարան է ներկայացնում։

Թիւրքահայերի մէջ սկսվել են նոր, անակնկալ շարժումներ, հոսանքներ, որոնք կամ պէտք է իրանց ծանրութեան ներքոյ ճզմեն, խորտակեն, ոչնչացնեն հայ ազգութիւնը, կամ պէտք է բարձրացնեն, վերակենդանացնեն նրան և հզօրապէս նպաստեն նրա վերածնութեանը։

Այդ նոր շարժումների, հոսանքների մէջ գլխաւորապէս երեքը իրանց վրա են դարձնում ընդհանուր ուշադրութիւն և երեքի շուրջն են մղվում կատաղի պայքարներ, բանակռիւներ, երեքի վերաբերմամբ առաջ են եկել պառակտումներ, հերձուածներ։ Եւ տեղի են ունենում նոյնիսկ անարգ միջոցներ՝ սպառնալիք, տէրրոր, ծեծ, այսինքն Թիւրքահայերի մօտ ևս պատուաստվում են այն գռեհիկ բարքերը, որ պատուաստեցին մեր մէջ մի քանի ժամանակ առաջ մարդիկ, որոնք չը գիտէին և չէին կարողանում ազնւաբար, շիտակօրէն կռուել իրանց հակառակորդների դէմ։

Առաջինը այն շարժումն է, որին գլուխ է կանգնած Եղիշէ Դուրեան պատրիարքը, համախմբելով իր շուրջը սկզբում կրօնական ժողովը և վերջերս նաև ազգային երեսփոխանական ժողովը, որ և տապալեց պատրիարքի հետ համերաշխութեամբ չը գործող քաղաքական ժողովը, դրանով ցոյց տալով իր կատարեալ համերաշխութիւնը և համակրութիւնը պատրիարքի ուղղութեանը. իսկ ազգային ժողովը, չը պէտք է մոռանալ, արտայայտում է Թիւրքիայի ամբողջ հայութեան կամքը և ձայնը։ Այդ շարժման կողմնակից և քարոզիչ է հանդիսանում մանաւանդ Թիւրքահայ գրեթէ ամբողջ մամուլը՝ պահպանողական, առաջադիմական-ազատամտական, սահմանադիր-ռամկավարական և նոյնիսկ հնչակեան, բացի դաշնակցական մամուլից, որ միակ դիսսոնանսն է կազմում այդ հզօր, գիտակից և իսկական ժողովրդական-սօցիալական շարժման մէջ։ Այդ շարժման հակառակ էր ազգային լեգալ հաստատութիւնների մէջ միայն մի մարմին՝ քաղաքական ժողովը, որը հէնց այդ պատճառով էլ տապալվեց, բայց այդ ևս այն պատճառով, որ նա իր կազմի մէջ ունէր այնպիսի անդամներ, որոնք, այդ դէպքում, փոխանակ իրանց ընտրող ազգի կամքը արտայայտելու, նախանձախնդիր էին աւելի իրանց կուսակցական շահերին, շահեր, որոնք ներկայումս տրամագծօրէն հակառակ են հայ ազգի ընդհանուր և կենսական շահերին։ Շեշտենք նաև այն կարևոր հանգամանքը, որ Թիւրքահայ մամուլի մէջ բացառութիւն չեն կազմում և այն թերթերը, որոնք աւելի շատ կամ նուազ կերպով բարեացակամօրէն էին և են տրամադրված դէպի դաշնակցականները, ինչպէս, օրինակ, «Արևելք», «Ժամանակ» թերթերը։ Շեշտենք և այն հանգամանքը, որ Եգիպտոսի հայ մամուլն ևս, ինչպէս և եւրոպական հայ գաղութները, Դուրեան պատրիարքի գլուխ կանգնած շարժման կուսակից և զօրավիգն է հանդիսանում։

Մեր ռուսահայերիս մէջ՝ Թիւրքահայերի այդ հզօր և բուռն շարժմանը ու Դուրեան պատրիարքի ուղղութեանը համակրող են հանդիսանում հասարակութեան գիտակից և իրազեկ խաւերը և «Մշակ» ու «Սուրհանդակ» թերթերը. միայն կղերական «Հովիւը» և հայ կեանքի մէջ ոչ մի նշանակութիւն չունեցող «Тифл. Листокъ» ռուս թերթն են պախարակում պատրիարքի բռնած ուղղութիւնը. իսկ «Баку» թերթը, որ, հիմնված նոյնպէս սխալ և անստոյգ կողմնակի թելադրութիւնների վրա, սկզբում յարձակվեց «Մշակի» դէմ սրա դէպի շարժումը բռնած համակրական ընթացքի համար, վերջերս ինքն ևս նկատեց, որ Դուրեան պատրիարքի գլուխ կանգնած շարժումը, արդարև, ժողովրդական է և բխում է հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանութեան աղբիւրից։ Եւ այժմ յաճախ նա տպում է յօդուածներ և այլ աղբիւրներից, որոնք շատ լաւ լուսաբանում են խնդիրը և ցոյց են տալիս Դուրեան պատրիարքի բռնած ընթացքի ամբողջ լրջութիւնը, կարևորութիւնը և արդարացիութիւնը։

Բայց ինչի՞ մէջ է կայանում այդ առաջին և գլխաւոր շարժման էութիւնը։

Մենք կը բնորոշենք նրան այսպէս.

Ըմբոստացումն հայ ժողովրդի, հայ մտքի և խղճմտանքի՝ ընդդէմ Թիւրքիայի կառավարութեան կեղծաւոր և նենգ քաղաքականութեան, որ ձգտում է սահմանադրական և ազատամտական գաղափարների ու սկզբունքների դիմակի տակ զրկել հայ ժողովուրդը իր հոգևոր, մտաւոր և բարոյական անկախութիւնից ու մինչև այժմ վայելած ներքին ինքնավարութիւնից.

Երկրորդ շարժումը՝ «յեղափոխական» կոչված հայ կազմակերպութիւններից մէկի բռնած ուղղութեան, գործելակերպի և գործունէութեան դէմ հայ ժողովրդի, մտքի և խղճմտանքի ըմբոստացումն է։

Երրորդ շարժումը՝ հակակրօնական և «Նոր-սերնդական» կոչված շարժումն է և նրա դէմ առաջ եկած պայքարը։

Աշխատենք լուսաբանել այս երեք շարժումները, ցոյց տալ նրանց էութիւնը, ցոյց տալ նրանց պախարակող և ջատագովող, թեր և դէմ կարծիքները, հայեացքները, որպէսզի կարիք լինի յանգել մի որոշ եզրակացութեան, թէ այդ շարժումների մէջ ո՞րն է առողջամիտը, ո՞րն է վնասակարը, ո՞րն է ազգի և ժողովրդի շահերին համապատասխանողը և ո՞րն է դիմացողը՝ մարդկային բանականութեան և խղճմտանքի առաջ։

Շահրիար

ՄԻ ԴԵՌԱՓԹԻԹ ԿԵԱՆՔ

Եթէ ճիշդ է այն միտքը, թէ բնութիւնը ոչ միայն անողոք է, այլ և յաճախ անարդար, այդ մտքի ճշմարտութեան մէջ ես համոզվեցի երէկ, երբ կատարվում էր ծաղկահասակ օրիորդ Մարգարիտ Մարտիրոսեանցի յուղարկաւորութիւնը և թաղումը։

Ես անձամբ ճանաչում էի և սիրում նազելի, գեղեցիկ և հրեշտակի նման անմեղ Մարգարիտին, որ հազիւ անցրել էր 17 գարուն։

Եւ նա գարնան մի հոտաւէտ, անուշաբոյր ծաղիկ էր, մի վարդ, որ, աւաղ, ինչպէս ամեն մի գեղեցիկ ծաղիկ և վարդ, սահմանված էր թառամելու դեռ չը փթթած, դեռ չը բացած իր ամբողջ գեղեցկութիւնը և նազելիութիւնը։

Բնութիւնը անողոք եղաւ և անարդար այդ անուշաբոյր ծաղկի վերաբերմամբ, մանգաղի մի հարուածով կտրելով նրա դեռափթիթ կեանքի թելը։

Բայց բնութեան անարդարութիւնը ահռելիօրէն փայլեց այդ անմեղ մանկան, այդ դեռափթիթ կոյսի մօր վերաբերմամբ։

Ո՞վ չէ ճանաչում Թիֆլիսում և նոյնիսկ Թիֆլիսից դուրս տիկին Հայկանոյշ Մարտիրոսեանին։ Ով, տեսնելով տիկնոջ իր սիրուն, ժպտալից, ծաղկահասակ աղջկայ՝ Մարգարիտի հետ, չէր մտածում, որ այդ գորովալից մայրը իր այդ աղջկան պատրաստում է շարունակելու իր գործը, իր մարդասիրական, բարեգործական, քրիստոնէական գթառատ գործը, որին նա, այդ խանդաղակաթ մայրը, ահա քանի տարիներից ի վեր անձնատուր է եղել, խնամելով հիւանդներին, տնանկներին, գաղթականներին, օգնելով, կերակրելով նրանց, դռնէ-դուռն, տնէ-տուն պտտելով և ժողովելով նրանց օգտին դրամ, հագուստ, վերմակ պատրաստելով նրանց համար, երեկոյթներ, վիճակախաղեր, ներկայացումներ կազմակերպելով ազգային և հասարակական զանազան հիմնարկութիւնների, դըպրոցների, ուսանողների օգտին։

Սպասվում էր, որ Մարգարիտի մէջ հայ հասարակութիւնը կունենայ ապագայում մի երկրորդ տիկին Հայկանոյշ, նրա գործի շարունակողը։

Եւ ահա երբ ես երէկ տեսայ տիկին Հայկանոյշին վշտահար, կքված, ճխլված ցաւի, կսկիծի ծանրութեան ներքոյ, գրեթէ խելակորոյս, ողբալիս և կոծելիս, երբ ես տեսայ այդ մօր անհուն, աննկարագրելի, անթարգմանելի ցաւը, սրտի մորմոքը, երբ ես լսեցի նրա ողբը, կոծը—«Ով Աստուած, իմ ո՞ր մեղքիս համար ինձ այսպէս սոսկալի կերպով պատժեցիր. մի՞թէ ես սովածին հաց չը տուի, ծարաւին՝ ջուր, մերկին՝ շոր, մի՞թէ ես չաշխատեցի թշուառների, դժբաղդների համար, մի՞թէ ես չը պտտեցի տնէ-տուն, դռնէ-դուռ, խանութէ-խանութ գաղթականների, Ադանայի որբերի և զոհերի համար, մի՞թէ ես գիշեր-ցերեկ չը մտածեցի որբերի, թշուառների մասին։ Եւ այդ բոլորի համար մի՞թէ շատ տեսար ինձ իմ միակ աղջկան, իմ Մարգարիտին։ Եթէ նրա կեանքը պահպանելու համար էլի ուրիշ մի բան պէտք է անէի, ինչո՞ւ ինձ չասացիր։ Մի՞թէ այդքան մեծ անարդարութեան արժանի էի»։

Եւ, այո, ես համոզվեցի, որ բնութիւնը յաճախ անարդար է, անորակելի անարդար։

Թող Մարգարիտը հրեշտակի նման յաւիտենականութեան մէջ և այնտեղից դիտելու է, անշուշտ, թէ դեռ որքան անարդարութիւններ պէտք է գործվեն մեր կեանքի մէջ։

Հ. Առաքելեան

ՄԱՐԴԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ. ԸՆԿ. ՄԷՋ

Շնորհիւ Զարադարի ամուսինների կողմից Սագարէջօ կալուածքում արված մի շարք փորձերի, Կովկ. Գիւղ. Ընկերութիւնը առիթ ունեցաւ Դեմչինսկու «Մարդային կուլտուրայի» առիթով արտայայտվել։

Երդւ.-հաւատարմատար Ի. Ս. Զարադարին՝ իր ամուսնու հետ՝ անցեալ տարի 139 քառ. սաժէնի վրա փորձեր էր կատարել՝ Դեմչինսկու եղանակով ցորեն ցանելու՝ 9 քառ. սաժէն սածիլ անելով, իսկ 130 քառ. սաժ. բողազը լցնելով։ Փորձերի հետևանքը եղել էր. 9 քառ. սաժէնից ըստացել էին $2^1/_2$ պուդ ցորեն, 130 քառ. սաժէնից՝ 10 պուդ։ Իրանց այդ փորձերը, մի շարք թւերով պարզաբանած, տպագրել էին «Кавказское Хозяйство» թերթում և միաժամանակ ցուցադրել էին ընկ. ընդհ. ժողովում, որը և զբաղվեց մարդային կուլտուրայի քննութեամբ։

Ժողովականները իրանց կարծիքով բաժանվել էին երկու խմբերի. մի խումբը՝ մեծ մասամբ գիւղատնտեսներ՝ յայտնում էր այն կարծիքը, որ մարդային կուլտուրան ոչ այլ ինչ է, եթէ ոչ հացի լաւ մշակութեան և բոյսի զարգացման համար լաւագոյն պայմանների արդիւնք, որը իր մէջ ոչ մի նորութիւն չի պարունակում, որ 150—300 պուդ բերք մի դեսեատինից սովորական երևոյթ է ամեն տեղ, ուր հողի մշակութիւնը և բոյսի խնամքը տեղի է ունենում ամենակատարեալ ձևով և որ այդքան բերք ստանալու համար կարիք չը կայ ձեռքի աշխատանքի դիմելու, այլ ընդհակառակը՝ պէտք է խրախուսել հողի կատարելագործված մեքենաներով մշակումը՝ պարարտացնելով նրան, լաւ սերմ ցանելով և այլն. և ապա դեռ ևս պարզված չէ, թէ որ աստիճան էժան է նստում ձեռքերով կատարած աշխատանքը. ուստի այդպիսի կարծիք յայտնող գիւղատնտեսներ՝ Իոսելիանի, Աթանասեան, Կանչէր, Էյրանով, Բալանթար, Լիմարեվ պնդում էին, որ պէտք է այդօրինակ փորձերը շարունակել, ճիշդ հաշիւ տեսնել, թէ ինչ է նստում մեր երկրի զանազան տեղերում այդ եղանակով ստացված ցորենի մի պուդը և որ այդպիսի կանոնաւոր փորձեր պէտք է յանձնել կատարելու մասնագէտներին՝ փորձնական դաշտերի վրա և ապա թէ, երբ ժողոված կը լինեն բազմաթիւ փաստեր, թւեր, եզրակացութիւններ դուրս բերել։

Միւս խումբը, կազմված մեծ մասամբ երկրագործութեան սիրողներից, պնդում էր, որ հէնց այժմ կարելի է ազգաբնակութեանը խորհուրդ տալ մարդային կուլտուրայի դիմելու, մանաւանդ քիչ հող ունեցողներին, որ այդ տեսակ կուլտուրայի հետևանքներն ակնյայտնի են։

Ժողովը, լսելով երկու կողմերի արած կարծիքները, որոշեց՝ շնորհակալութիւն յայտնել Զարադարի ամուսիններին նրանց զեկուցման և փորձերի համար, յանձնարարելով թէ նրանց և թէ պետական փորձնական հաստատութիւններին և մասնաւոր գիտակ անձանց՝ շարունակել այդ փորձերը և ապա, երբ ժողոված կը լինեն բաւականաչափ փաստեր ու թւեր, քննութեան առնել ընկերութեան մէջ և յետոյ միայն եզրակացութիւններ հանել։

Ա. Ա.

ՌԱԶՄԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՀԱԳԻՆ ՊԱՀԵՍՏԸ ԲԱԳՈՒՈՒՄ

«Մշակի» երէկվայ համարում տուինք նախնական տեղեկութիւններ այդ յայտնագործութեան մասին։

Այժմ «Каспій» լրագրից քաղում ենք մի քանի մանրամասնութիւններ.

«Գտնված իրերը դարսված էին արկղներում, փաթաթված խսիրով և կապկապված թոկերով, այնպէս որ այն տպաւորութիւնն էր ստացվում, թէ այդտեղ տնային իրերի պահեստ է։

«Արկղներից մինում գտնվեց 1905 թ. անլեգալ գրուածքներ և նամակներ։

Բոլոր գտնվածը տեղաւորեցված էր մի մեծ սենեակում, ուր կախված էին Թագաւոր Կայսրի և Կայսրուհու պատկերները։

«Հրացանները և փամփուշտները քսված էին թարմ մազով, որ ապացուցանում է, թէ իրերի մասին հոգ էին տանելիս եղել ժանգոտվելուց և փչանալուց պահելու համար։

«Այդ տանը մտնել ոչ մի կերպ չի կարելի, եթէ չը լինի այն միակ մուտքը, որ բացվում է կողքի տան բակից։

«Տան դռների վրա կայ փոքրիկ փական, իսկ պատուհաններն ամուր ծածկված են եղել շարունակ, այնպէս որ կարծվել է, թէ այդ յետ ընկած տան մէջ բնակութիւն չը կայ։ Տան մուտքի մօտ գտնվում է միայն մի փոքրիկ սենեակ, ուր ապրում է դռնապանը։

«Երեք ամիս առաջ խուզարկու ոստիկանութեան նախկին պետ Դուբէնկոն իմացաւ այդ մասին և հաղորդեց ոստիկանապետին։ Կատարվեց մանրազննին խուզարկութիւն երկու իրար կպած տներում, բայց այդ տունն ազատ մնաց իր արտասովոր զգուշութեամբ։

«Այս տան դիմաց գտնվում է Հայրումեանի մեծ տունը (այս այն Հայրումեանն է, որին անցեալ տարի յափշտակեցին փրկանք ստանալու համար)։ Այդ տան վերին յարկում վարձվեց մի սենեակ, որտեղից և գլխաւորապէս հսկողութիւն սահմանվեց զէնքերի պահեստի վրա։

«Տնատէր Ամիրօվը յայտնեց, որ ինքը ոչինչ չը գիտէ, տունը նա վարձով է տուել ամսական 20 րուբլով և սենեակը վարձել են միևնոյն մարդիկ ամբողջ 4 տարի, կանոնաւոր կերպով վճարելով փողերը. իսկ թէ ինչ էր այնտեղ կատարվում, նա չէր հետաքրքրվում։

«Ադմինիստրացիայի բարձր պաշտօնեաների կարծիքով, երևան հանված զէնքերի պահեստը պատկանում է «Դաշնակցութիւն» կուսակցութեանը, որպիսի հանգամանքը մասամբ ցոյց են տալիս այնտեղ գտնված գրութիւնները և այլն։

«Բոլոր գտնվածը թողնված է իր տեղում։ Դրված է ուժեղ պահակախումբ զինւորներից և ոստիկաններից»։

ԽԱՐԿՈՎԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Խարկովի տղամարդկանց և կանանց 5 բարձրագոյն դպրոցները ունեն մօտ 250 հայ ուսանողներ և ուսանողուհիներ, որոնք եկել են այստեղ սովորելու զանազան հայաբնակ քաղաքներից, գլխաւորապէս Կովկասից։ Համալսարանի հայ ուսանողները, որոնց թիւը հասնում է մօտ 150-ի, ունեն իրանց համերկրացիութեան ընկերութիւնը (армянское землячество), որի գլխաւոր նպատակն է նիւթապէս օգնել չքաւոր ուսանողներին։ Նիւթական միջոցները ուսանողութիւնը հայթայթում է թատրոնական ներկայացումներից, երաժշտական հանդէսներից և միանուագ դրամական նուէրներից։

Սակայն, համերկրացիութեան ընկերութիւնը ունի և մի ուրիշ գեղեցիկ նպատակ. այդ այն է, որ նա իր ծրագրի համաձայն իրաւունք ունի կազմել գրականական և ինքնակրթական շրջաններ, որտեղ կարելի լինի հիմնական կերպով սովորել հայոց լեզուն, ծանօթանալ նրա գրականութեանը և առհասարակ հայկական կեանքի բնաւորութիւն ունեցող բոլոր երևոյթների հետ։ Այդ պատճառով նա ունի մի փոքրիկ գրադարան-ընթերցարան հայոց աղօթատան բակում, որտեղ ստացվում են մի քանի ռուսաց պարբերական հրատարակութիւններ և մի հայերէն թերթ։ Գրադարան-ընթերցարանը, միջոցներ չունենալով, չունի բաւական թւով հայերէն գրքեր և թերթեր, ուստի և չէ կարողանում ծառայել իր բարձր կոչումին։ Այս տեսակ գրականական և ինքնակրթական շրջանները անհրաժեշտ են մանաւանդ այն ուսանողների համար, որոնք ռուսաց միջնակարգ դպրոցներում զանազան պայմանների շնորհիւ զուրկ են մնացել հայոց լեզուի աւանդութիւնից։ Ինչպէս տեսնում էք, նպատակը շատ բարձր է և գովելի։

Ուսանողութիւնը, ինչպէս կը մտածէ ընթերցողը, ինքնաճանաչ տարր լինելով, հասկացել է իր պակասաւոր կողմերը, զգացել է մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը և այդ պատճառով ընկերական և ինքնակրթական շրջաններ ձեռնարկելով ուզում է առաջ տանել հայոց լեզուն և նրա կուլտուրան։ Սակայն մօտիկ ծանօթանալով այդ ընկերութեան գործունէութեան հետ ակամայ գալիս ես այն եզրակացութեան, որ այդ գեղեցիկ ծրագիրները մնում են միայն թղթի վրա, և ուսանողութիւնը, այդ գիտակից տարրը, ոչ մի ձգտում չէ ցոյց տալիս կազմակերպելու այդպիսի համակրելի շրջաններ, որտեղ շօշափվէին և փոխանակվէին զանազան կենսական հարցեր հայկական կեանքից։ Պէտք է նկատել, որ Ռուսաստանի համալսարաններում, որտեղ կան մեծ թւով գիտնական պրոֆեսօրներ, ծաղկած է թէ ռուսաց լեզուն և թէ նրա ճոխ գրականութիւնը. և արդարև մենք հայերս, որ իբրև մի փոքրիկ կուլտուրական ազգ ենք կոչվում, որքան ցած ենք կանգնած մեր թէ զարգացողութեամբ և թէ աղքատ գրականութեամբ այդ մեծ ազգից։ Այսպիսի պայմաններում, երբ հայ ազգը մի քանի մտաւոր աստիճան ցած է կանգնած ուրիշ կուլտուրական ազգերից, մեզ՝ հայ ուսանողներիս վրա բարոյական մեծ պարտք է ընկնում, համալսարաններում, որտեղ գործելու ազատ ու լայն ասպարէզ կայ, այդպիսի շրջաններ կազմելով, առաջ քաշել հայոց լեզուն և նրա կուլտուրան։ Սակայն տխուր իրականութիւնը միշտ ընդհակառակն է ցոյց տալիս։ Համերկրացիութեան ընկերութիւնը տասնեակ տարուց աւել գոյութիւն ունի Խարկովում, բայց գրականական և ինքնակրթական այդ համակրելի շրջանները չեն կարողանում կենդանութիւն ստանալ մեր ուսանողութեան մէջ։ Ինչո՞ւ, կը հարցնի ընթերցողը. որովհետև չը կայ հետաքրքրութիւն, չը կայ ցանկութիւն դէպի մայրենի լեզուն և նրա գրականութիւնը։ Արդ, եթէ հայ ուսանողութիւնը, այդ ապագայի ժողովրդական գործիչները, այսպէս բացասական է վերաբերվում դէպի հայկական ընդհանուր բնաւորութիւն ունեցող երևոյթները, էլ ինչ կարելի է պահանջել տգէտ և խեղճ հայ գիւղացուց։

Dixi et animam salvavi (и сказалъ, и душу облегчилъ)։

Ուսանող Յովհ. Ադամեան

ԿՌԻՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹԵԱՆ ԴԷՄ

(Դասախօսութիւններ մանկական առողջապահութեան մասին)

Լեռնե՛ր, լեռնե՛ր, տան ողբերուս արձագանք,
Զի կորցըրի իմ մէկ հատիկ ըսփոփանք.
Դեռ նորատի՝ շիրիմն եղաւ իր օրրան,
Քնքուշ որդւոյս ժառանգեցի ցուրտ դամբան։
ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

Սրանից մի տարի առաջ, Մոսկվայի քաղաքապետի թոյլտուութեամբ, մայրաքաղաքում հիմնվեց մի ընկերութիւն, որի նպատակն է՝ կռիւ մղել մանուկների մահացութեան դէմ, յատկապէս՝ այն հասակի, որ ընդգրկում է ծնվելուց մինչև 15 տարին։

Այդ նպատակին հասնելու համար, ներկայումս կազմվում են հասարակական ժողովներ, կազմակերպվում են դասախօսութիւններ, տրվում մրցանակներ՝ ընկերութեան առաջարկած նիւթերից լաւագոյն աշխատութիւնների համար, հիմնվում, ծծկեր երեխաներին լաւ կաթ ընձեռելու նպատակով, յատուկ կայարաններ, ապաստաններ, մսուրներ, ինչպէս և դպրոցական տարիքի մանուկների համար՝ ամառային գաղթավայրեր, սանատօրիաներ, ձեռք են բերվում հասարակական հրապարակներ՝ առողջապահիկ խաղերի համար և այլն։ Մի խօսքով՝ ուսումնասիրվում են մանուկների մահացութեան պատճառներն ու նրանց դէմ մաքառելու միջոցները։

Այս տարի ընկերութիւնը կազմակերպելու է 13 դասախօսութիւն, որոնք վերջանալու են նոյեմբերի 29-ին։

I. Դասախօսութիւն

Հոկտեմբերի 4-ին, երեկոյեան 5 ժամին, ես ներկայ էի առաջին դասախօսութեանը՝ Մոսկվայի նահանգական վարչութեան դահլիճում, որ բաւական փոքրիկ է, կարող է տեղաւորել իր մէջ հազիւ 200 մարդ։ Ի հարկէ, չը կար ոչ մի հայ։ Բռնված էին աթոռների միայն $^3/_4$-ը։ Ներկայ եղողների ճնշող մեծամասնութիւնը կանայք էին։

Ու դա շատ հասկանալի է, քանի որ կնոջ կրծքի տակ է գոյանում մանկիկը, նրա մարմնից է առնում իր սնունդը. նա է տաքցնում նրա մատներն՝ իր ձեռներում, նրա մարմինը՝ իր ծնկներում, նրա հոգին՝ իր սրտում։

Դասախօսն է պրիվատ-դոցենտ Դ. Ե. Գորոխովը։

Նա խօսում է բնակչութեան կուլտուրականութեան ազդեցութեան մասին՝ մանկական ու հանրային մահացութեան նկատմամբ։ Նա միայն հանուր հայեացք գցեց հարցի վրա, քանի որ, իրանից յետոյ, իր ընկերներից իւրաքանչիւրը խօսելու է հարցի այլ և այլ կողմի վրա՝ առանձնապէս։

Նրա առջև դրված հարցը պարզվում, որոշ գնահատութիւն է ստանում, ի հարկէ, գլխաւորապէս վիճակագրական տեղեկութիւններով։ Բերել այստեղ թւերի այն երկայն շարանները, որ նա դնում է իր ունկնդիրների առջև, անկարելի է, անկասկած։ Բայց բոլոր ասածներից երևում է, որ Ռուսաստանում հետզհետէ մեծացող մանկական մահացութիւնն, որ երկու անգամ աւելի է, քան միւս հասակներինը, զգալիօրէն անց է և՛ եւրոպական միւս պետութիւնների մանուկների մահացութիւնից։ Մանուկների մահացութիւնը տարածված է աւելի բանւոր դասակարգի միջև, որտեղ 1000 ծնվածներից մեռնում է 300-ը, մինչդեռ միջին դասակարգում՝ 180, իսկ բարձր շըրջանում՝ 90։

Սրա պատճառը յարգելի դասախօսը գըտնում է երկրի կուլտուրականութեան ստոր զարգացման և աշխատող դասակարգի տնտեսական ողբալի կացութեան, այլ և անբաւարար առողջապահիկ պայմանների մէջ։ 5—6 յարկանի մի տան մէջ, ասում է, հիւանդութիւնները բոյն են դնում գլխաւորապէս վերջին, գետնափոր յարկում։ Ամենից առաջ պէտք է վերացնել այս պատճառները։

Մի բան, որ, կարմիր թելի պէս անցնում էր նրա առաջ բերած պետութիւնների միջև, առողջապահական տեսակէտից, այն է, որ, ամեն մասամբ, Ռուսաստանը կանգնած է վերջին տեղում, իսկ Նորվեգիան՝ առաջին։ Եւ, ասես թէ, մահվան պատճառած աւերմունքը տեղը բերելու համար է, որ ծնունդն էլ է բռնում առաջին տեղը Ռուսաստանում։

«Բայց Ռուսաստանում,—դառը շեշտով ասում է յարգելի դասախօսը,—տիրում է խոր տգիտութիւն, տնտեսականապէս էլ հեռու է երկիրը բարեկարգ լինելուց։ Չը կան մեզանում ամենատեսակ այն յարմարութիւնները, որոնցով շրջապատված է Գերմանիան։ Բեռլինի հիւանդանոցներում, օրինակ, տիրում է չը տեսնված այնպիսի մաքրութիւն, որի մասին մենք գաղափար չունենք»։

Գալով մասնապէս մանկական հասակին, դասախօսը, մահացութիւնների տեսակէտից, այն բաժանեց հետևեալ տարիների. ծնվելուց մինչև հինգ ու մէկ տարին, իսկ ամենից շատ՝ առաջին ամսում։

Ռուսաստանում, թաթարների ու հրէաների միջև աւելի քիչ է պատահում մանուկների մահացութիւն, քան պրավօսլավների, որովհետև,—ասում է,—այդ ցեղերի կրօնական հայեացքով՝ մանուկն անպայման սնվելու է մօր ստինքով։ Նա շեշտելով շեշտեց, թէ մեծ նշանակութիւն ունի երեխային մայրական ստինքով կերակրելը, մինչդեռ ծծակի (соска-ի) կամ արհեստական ստինքի գործածութիւնը,—որին դիմում են ծոյլ մայրերը՝ միայն երեխայի լացը դադարեցնելու համար,—արժանացրեց առանձին արհամարհանքի։ Միանգամայն աւելացրեց, որ նոյնիսկ որևէ դայեակի կաթով սնվելու և հարազատ մօր կաթով սնվելու միջև՝ տարբերութիւնն ահագին է։

Շեշտեց նոյնպէս, որ բանւոր կանանց պէտք է թոյլ տալ, որ յղիութեան վերջին երկու ամիսները չը բանեն, ինչպէս և ծնելուց յետոյ՝ առաջին ամիսը, տալով սակայն նրանց համեմատ ծառայութեան վարձըն այդ ամիսների համար։

Բայց մանուկների մահացութեան վրա ազդում են և՛ հետևեալ պայմանները՝ ժառանգականութիւնը, այն է ծնողների սիֆիլիստիք ու ալկօհոլիստ լինելը, խլաթոքախտը՝ (бугорчатка) և ջղայնութիւնը։

Մանուկները մահացութեան մեծ տոկոս են տալիս նաև ստամոքս-աղիքային, տարափոխիկ ու շնչառական գործարանների հիւանդութեան դէպքերում։ Է. Ք. Ն.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 24 հոկտեմբերի

6-րդ նիստում նախագահում է իշխ. Վոլկոնսկին։

Հերթին դրված է արդարադատութեան մինիստրի նախագիծը պայմանական դատապարտութեան մասին։

Մինիստրների օթեակում է արդարադատութեան մինիստրը։

Աջէմեանը զեկուցանում է նախագծի հիմնական կէտերը։ Այս նոր միջոցը գործադրվելու է սոսկ աննշան յանցագործների համար, որոնց պատիժը լինելու է 1 տարի և 4 ամիս բանտարկութիւնից ոչ աւել։ Մեղադրական դատավճիռ որոշվում է, անվում է հրապարակական յանդիմանութիւն և միայն պատժի գործադրութիւնը յետաձգվում է. օրինակելի վարքից յետոյ 3—5 տարի փորձնական ժամանակաշրջանում, նայած յանցանքի ծանրութեան, պայմանական կերպով դատապարտված անձը յրաւի ազատվում է պատժից։ Մասնաժողովը, զեկուցանողի ասելով, ընդունելով կառավարական օրինագծի հիմնական կէտերը, գտնում է, որ այն ձեն ևս, որ ընտրել է մինիստրութիւնը այդ միջոցը գործադրելու համար, բոլորովին կանոնաւոր է։ Աջէմեանը այնուհետև մանրամասն կանգ է առնում այն դրդապատճառների վրա, որոնցով մասնաժողովն անհրաժեշտ է համարում պայմանական դատապարտութիւնը գործ դնել նաև բանտարկեալների վերաբերութեամբ։

Զամըսլօվսկու կարծիքով՝ այդ նոր օրէնքից կօգտվեն միմիայն յեղափոխականները, որոնք երկպառակութիւն են սերմանում իշխանութեան և ժողովրդի միջև։ Նրա կարծիքով՝ օրինագիծը պէտք է մերժել, որովհետև նրանով յանցագործութիւնը ոչ թէ կը պակասի, այլ, ընդհակառակն, կը կրկնապատկվի (ծափ. աջից)։

Արդարադատութեան մինիստրը ասում է, որ հանդէս գալով ի պաշտպանութիւն պայմանական դատապարտութեան՝ նա անհրաժեշտ է գտնում հակիրճ կերպով նկարագրել այն բոլոր մտքերը, որոնք միացրին ժամանակակից օրէնսգէտների մեծ մասին, որոնք խոստովանում են այդ օրէնքի ահագին օգուտը և նպատակայարմարութիւնը։ Մինիստրը մանրամասն պարզում է յանցագործութեան դէմ կռիւ մղելու զարգացման և ծագման պատմութիւնը։ Սկսելով հին իրաւունքից, երբ կռիւը կատարվում էր բացառապէս յանցաւորի անձի դէմ, մինիստրը յաջորդաբար հասնում է անցեալ դարի երկրորդ կէսին, երբ ծագեցին յայտնի մարդաբանական և սօցիոլօգիական դպրոցները, որոնք առաջ մղեցին այն իրողութիւնը, թէ ամենից առաջ անհրաժեշտ է կռիւ մղել յանցագործի շրջապատի դէմ։ Մինիստրը ապա դարձեալ մանրամասնօրէն պարզում է պայմանական դատապարտութեան ինստիտուտի էութիւնը։ Կանգ առնելով պատահական և մշտական յանցագործութիւնների վրա, հռետորը բերում է յայտնի օրէնսգէտների կարծիքն այն մասին, որ պատիժը, նամանաւանդ ժամանակաւորապէս ազատութիւնից զրկելու ձևով, չափազանց կործանարար ազդեցութիւն է անում յանցաւորների վրա։ Ռուսական պատժական սիստեմի լուրջ պակասութիւնների մէջ կարճժամանակեայ ազատազրկութիւնը վնասակար է ինքնին։

Առաջին անգամ պայմանական դատապարտութիւնը մտցվեց Մասսաչուզէտս նահանգում, որտեղից յետոյ մուտք գործեց Եւրոպա։ Մինիստրը թւում է մի շարք պետութիւններ, որոնց մէջ գործադրվում է այդ դատապարտութիւնը։ Վերջին պետութիւնը, ուր մտցվեց պայմանական դատապարտութիւնը 1908 թ., Սպանիան էր։ Վերջապէս մի շարք երկիրներ, ինչպէս Յունաստանը, Կրօացիան, Աւստրիան, Ունգարիան, ներկայումս նախագծում են մտցնել պայմանական դատապարտութիւնը։

Յետոյ մինիստրը կանգ է առնում ռուսական հասարակական կարծիքի վրա դէպի քննվող հարցը։ Նրա անհրաժեշտութիւնը առաջ մղեց նաև օրէնսգէտների միջազգային միութեան ռուսական խմբակը։ Վերջապէս Պետական Խորհուրդը նոյնպէս նոր քրէական պատժագրքի քննութեան ժամանակ խօսեց յօգուտ՝ պայմանական դատապարտութիւնը օրէնսդրական ճանապարհով քննելու։ Մինիստրի ասելով, այն երկիրներում, ուր արդէն մուտք է գործել պայմանական դատապարտութիւնը, յանցագործութիւնների թիւը զգալի չափով պակասել է։

Այնուհետև մինիստրը կանգ է առնում այն առարկութիւնների վրա, որոնք սովորաբար առաջադրվում են այդ ինստիտուտի դէմ, և գտնում է, որ այդ առարկութիւնները վերին աստիճանի չափազանցված են։

Պաշտպանելով օրինագիծը, մինիստրը մասնաժողովի որոշումը գտնում է չափազանց լայնացված անցանկալի ուղղութեամբ։ Ամենից առաջ մինիստրը անհամապատասխան է գտնում պայմանական դատապարտութեան գործադրութիւնը բանտարկեալների վերաբերութեամբ։ Երկրորդ, նրա կարծիքով, բաւականին հիմք չը կայ տարածելու այդ ինստիտուտը նաև երդուեալների դատարանի վրա։ Աւելի մանրամասն տեսութիւն այս հարցերի առիթով մինիստրը խոստանում է ներկայացնել յօդուածային ընթերցման ժամանակ։ Այնուհետև մինիստրը մատնանշում է, որ պայմանական դատապարտութեան ինստիտուտը միանգամայն համապատասխանում է ռուսական իրաւագիտակցութեան և, հակառակ Դումայի անդամ Զամըսլօվսկու յայտարարութեան, կարծում է, որ ռուս ժողովուրդը միանգամայն կըմբռնէ և կը գնահատէ այդ ինստիտուտը, որովհետև պայմանական դատապարտութեան գաղափարը յայտնի էր տակաւին մոսկովյական շրջանին, երբ Ալէքսէյ Միխայլովիչ Կայսրի կանոնադրութեամբ յանցաւորները յանձնվում էին երաշխաւորութեամբ, նախօրօք ստորագրութիւն առնելով որ յանցաւորն այլևս չի գողանայ, չի թալանի։ Միևնոյն գաղափարը գործադրում են շրջանային դատաւորները։ (Ծափահարութիւն կենտրոնում)։

Առաջարկութիւն է լինում 30 անդամների ստորագրութեամբ հերթից հանելու պայմանական դատապարտութեան օրինագիծը և նրա տեղ դնել տեղական դատարանի նախագիծը։

Տիմօշկինը պաշտպանում է առաջարկութիւնը գիւղացիների կողմից, որովհետև տեղական դատարանի խնդիրը աւելի է վերաբերում նրանց։

Կուզօվկօվը իբրև գիւղացի, ընդհակառակն, դէմ է պայմանական օրինագիծը առաջին հերթից հանելուն։

Ձայների մեծամասնութեամբ ընդդէմ աջակողմեանների և մասամբ չափ. աջակողմեանների առաջարկութիւնը մերժվում է։

Մակլակօվը ողջունում է պայմանական դատապարտութեան նախագիծը։ Հռետորի կարծիքով ամբողջ առաւելութիւնը օրինագծի մէջ կայանում է նրանում, որ կը վերանայ վերջապէս ռուսական կեանքում կուռ այն ողբերգութիւնը, որպիսին տեղի է ունենում ամեն մի դատաւորի խղճմտանքում, երբ պատիժը չափազանց մեծ է, իսկ մեղմացուցիչ հանգամանքները ի տես կան։ Առարկելով Զամըսլօվսկուն, Մակլակօվը ասում է, որ պայմանական դատապարտութիւնը կը թեթևացնէ մեր պետական գանձատան ծախսերը, որովհետև շատ բանտարկեալներ, որոնք ներկայումս իրանց պատիժը կրում են պետութեան հաշւով, չեն ենթարկվի բանտարկութեան։ Աւելի լաւ է Զամըսլօվսկին մտածէր, որ պայմանական դատապարտութեամբ կը կրճատվեն պաշտօնեաների վրա ծախսվող գումարները և ժողովրդի փողերով պահվող յանցագործութեան դպրոցների և ակադեմիաների ծախքերը, որպիսիները հանդիսանում են մեր բանտերը (ծափ. օպպօզիցիայում)։ «Պայմանական դատապարտութիւնը հարկաւոր է ոչ թէ իրանց օրերը մաշած կալանաւորների համար, այլ այն երիտասարդների, որոնց դուք պարտաւոր էք փրկել բանտում քաղաքականապէս փչանալուց։ Պայմանական դատապարտութիւնը ինքնին առաջին քայլն է լինելու մեր կեանքը ռէալ կերպով բարելաւելու ճանապարհին» (ծափ. ձախից և կենտրոնից)։

Ժամը 6-ին նիստը փակված է։ Հետևեալը հոկտ. 26-ին, առ. ժամը 11-ին։ (Հ. Գ.)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Հոկտեմբերի 23-ից Թիֆլիսի դատաստանական պալատի 2-րդ քրէական բաժնում նշանակված էր կառավարիչ սենատից բեկված Շուշու Ագուլեաց եկեղեցու քահանաներ՝ Գարեգին Յովհաննիսեանի, Հախումեանի և Վարդապետեանի գործը, որոնք մեղադրվում են յիշեալ եկեղեցում ռումբեր պահելու մէջ, որ երևան հանվեց 1906 թւի սեպտեմբեր ամսին։

Գանձակի նահանգական դատարանը, ճանաչելով յիշեալ քահանաներին և նրանց հետ միասին եկեղեցական չորս սպասաւորներին մեղաւոր, բոլորին դատապարտեց բոլոր իրաւունքներից զրկման և $3^{1}/_{2}$ տարով բանտարկութեան։

Թիֆլիսի դատաստանական պալատը, ուր անցաւ գործը մեղադրեալների բողոքագրով, արդարացրեց յիշեալ 3 քահանաներին, հաստատելով դատարանի վճիռը սպասաւորների վերաբերութեամբ։

Դատախազի բողոքի համաձայն, պալատի այս վճիռը քահանաների վերաբերութեամբ սենատը բեկեց և յանձնեց նոր քննութեան պալատի նոր կազմով։

Հոկտեմբերի 23-ին պալատի նիստին ներկայացաւ Գարեգին ք. Յովհաննիսեանը։ Մեղադրեալ Հախումեան քահանան Շուշուց հեռագիր էր ուղարկել հիւանդութեան մասին, որ հաստատել է քաղաքային բժիշկ Ջոհրաբեանը, և խնդրում էր գործը յետաձգել. նոյն տեսակ խնդիր ուղղեց նաև Յովհաննիսեան քահանան։

Պալատը որոշեց գործի քննութիւնը յետաձգել։

—

Հոկտեմբերի 26-ին նահանգական դատարանի 1-ին բաժանմունքում սկսվեց Թիֆլիսի խուզարկու բաժանմունքի նախկին պաշտօնեայ Ալէքսանդր Սաֆարօվի գործի քննութիւնը, որ մեղադրվում է ուրիշ մարդկանց հետ անցեալ տարվայ օգոստոսին 150 րուբլի կաշառք վերցնելում, բանտարկութիւնից ոմն Կարապետ Արտադեանին ազատելու համար, որը ձերբակալված էր իբրև դրամաշորթ։

Սաֆարօվին դատարան բերին ոստիկանական հսկողութեան տակ։

Գործը կը ձգձգվի։

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դագաղի վրա պսակ դնելու փոխարէն ստացանք Բագրատ Պապիեանից 10 րուբլի։

Աստուածատուր Երիցեանը որոշել է պսակի փոխարէն վճարել Մանթաշեանի անուան առևտրական դպրոցում մի չքաւոր սանի ուսման վարձը։

Ջիլինգարեանը դարձեալ նուիրել է 100 ր., յօգուտ Հայոց Ազգագրական Ընկ.։

Կար. Քրիստափորեանից և Մկր. Նշանեանից, ծաղկեպսակի փոխարէն, 10 ր., յօգուտ Ադանայի որբերի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հոկտեմբերի 25-ին բժ. Մարկէվիչը եօթ բժիշկների ներկայութեամբ շատ աջող անդամահատութեան ենթարկեց Թիֆլիսի քաղաքագլուխ հիւանդ իշխ. Չերքէզովին։ Հիւանդը այժմ իրան լաւ է զգում։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի քաղ. վարչութեան շինութեան մէջ տեղի կունենայ կովկասագիտութեան բարձր դասընթացքների դասախօսների խորհրդակցութիւնը առաջիկայ տարվայ դասընթացքների ծրագիրը կազմելու համար։ Նրանք, որոնք կը կամենան դասախօսութիւններ կարդալ յիշեալ դասընթացքներում, հրաւիրվում են հաղորդել, թէ ո՛ր առարկայից և ո՛րքան դասախօսութիւններ նրանք մտադիր են կարդալ։

◆ Հոկտ. 26-ին Բագւում բացվեց Բագուի նաւթարդիւնաբերողների XXV համագումարը։

◆ «Alliance française» ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը իր վերջին նիստում վճռել է. ա) բաց անել (մեծահասակների) չափահասների համար, ֆրանսերէն լեզուի դասընթացքներ, երկու խմբակների բաժանված. նրանց համար՝ որոնք բոլորովին լեզու չը գիտեն, և այնպիսիների համար, որոնք կը ցանկանային աւելի կատարելագործվել։ բ) Նմանապէս բացել առանձին դասընթացքներ Թիֆլիսի ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների համար։ գ) Օգնութեան հասնել ֆրանսուհի դաստիարակչուհիներին և ֆրանսերէն լեզու աւանդողներին՝ նրանց համար տեղեր կամ դասեր գտնելով։ դ) Թոյլատրել կողմնակի անձանց ընկերութեան երեկոյթներին, հաւանութեամբ մի անդամի և 50 կոպ. վճարով ամեն անգամ։ Ընկերութեան երեկոյթները տեղի են ունենում չորեքշաբթի օրերը։ Այսօրվայ երեկոյթի ծրագիրն է. դասախօսութիւն Ալֆօնս Դօդէի մասին, կը կարդայ Լիւզինը, և ժամանակակից մի քանի հեղինակների գրուածքների ընթերցումը։ Ընկերութեան քարտուղար Դը Սենտ Մարի (Ելիզաւետինսկայա փողոց, 76) պատրաստ է տալու ընկերութեան վերաբերեալ բոլոր ցուցմունքները։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրաւիրել է ինժեներ Լանդէին Թիֆլիս՝ Ծալկայի աղբիւրներից քաղաքային ջրանցք կառուցանելու նոր նախագիծ կազմելու համար։

◆ Գաղթավայրերի գլխաւոր վարչութիւնը, ի կատարումն Պետական Դումայի ցանկութեան, մշակել և յանձնել է Կովկասի Փոխարքայի եզրակացութեանը կանոնների մի նախագիծ՝ Կովկասի հողաբաժինները գաղթականներին տալու մասին։ Այդ կանոնները վերաբերում են Արևելեան Անդրկովկասին և մասամբ էլ Մուղանի դաշտին և Կովկասի հողերը տալիս են բոլոր ռուսներին։

◆ Վրաց Թատրոնի արտիստուհի Նատալիա Մերաբօվա Գաբունիա-Ցագարելու բեմական գործունէութեան 30-ամեակի առիթով, վրաց դրամատիքական ընկերութեան վարչութիւնը որոշել է 1909 թ. նոյեմբերի 29-ին կազմել վրաց ազնուականութեան թատրօնում յոբելեանական հանդէս։ Այդ առիթով վարչութիւնը և յոբելեանական յանձնաժողովը հրաւիրագրեր են ուղարկել ազգային և հասարակական հաստատութիւններին և հիմնարկութիւններին, ինչպէս նաև մամուլի օրգաններին, ի թիւս որոց նաև «Մշակին»։ Յոբելեանին այս կամ այն կերպ մասնակցել ցանկացողները պէտք է մինչև նոյեմբերի 27-ը տեղեկացնեն Վրաց Դրամ. Ընկ. Վարչութեանը։

◆ «Ախուրեան» թերթում կարդում ենք հետևեալը.

«Մեզ հաղորդում են, որ Բաբերդում սպանված Եղիշէ Թոփչեանի ծնողները, որոնք գնացել էին իրանց որդու դիակը բերելու, ստիպված են եղել սահմանագլխից յետ դառնալ, տեղեկութիւն ստանալով՝ թէ դիակն արդէն թաղված է Կարինում»։

Էջմիածնի սինօդի կարգադրութեամբ տեղիս հոգևոր կառավարութեան քարտուղար Ալէքսանդր Սանոյեան ուղարկված էր Տաթև, այնտեղի հոգևոր կառավարութեան երկար տարիներով քաշքշվող ու խճճված զեղծումների գործը պարզելու և զեղծումները երևան հանելու համար։

«Ա. Սանոյեան, իբրև նման գործերի հըմուտ տեղեակ, արդարացրել է սինօդի յոյսերը և իսկապէս երևան է բերել տասնեակ հազարների զեղծում։ Այդ գործը վարելու համար նա ստացել է 300 րուբլի նպաստ։

«Այժմ սինօդը Սանոյեանին նորից կարգադրել է գնալ Տաթև և աշխատել հաւաքել զեղծարարներից տարիներով գողած փողերը»։

◆ Այս օրերս Պետերբուրգ է ուղևորվել Ալէքսանդրօպօլի քաղաքագլուխ Յովսէփ Տիգրանեան։

◆ «Запросы Жизни» անունով մի նոր շաբաթաթերթ, որի առաջին համարը ստացանք, նուիրված կուլտուրայի և քաղաքականութեան, սկսել է հրատարակվել Պետերբուրգում այս հոկտ. 18-ից յայտնի սոցիոլոգ Մակսիմ Կովալևսկու և Բլանկի խմբագրութեամբ և աշխատակցութեամբ ռուս նշանաւոր գիտնականների և գրողների։ «Կեանքի պահանջները,—ասում է նոր շաբաթաթերթը,—մեզ համար միայն անուն չէ, դա մեր ծրագիրն է։ Մեր առաջին նպատակը մենք համարում ենք կենդանի իրականութեան ամենակողմանի լուսաբանութիւնը, ռուսական հասարակական կեանքի հիմնական հարցերի բացատրութիւնը, բացումը այն ուղիների, որոնցով Ռուսաստանը գնում է դէպի պատմական նպատակները»։

◆ Բագուի տեխնիքական ընկերութեան մէջ տեղի է ունեցել մի նոր ընկերութեան հիմնադրական ժողով։ Ընկերութիւնը նպատակ ունի ուսումնասիրել օդագնացութիւնը և ժողովրդականացնել նրա յաղթութիւնները։ Ժողովը վճռել է արտասահմանից ձեռք բերել մի օդանաւ։

◆ «Рус. Вѣд.»-ի վերջին համարում (№ 242) զետեղված է Ա. Խախանօվի գրած մի համակրական յօդուածը, որ նուիրված է նորերս Կովկասում վախճանված բժիշկ Գրիգորիյ Վօլսկու յիշատակին։ Գ. Վօլսկին, ինչպէս յայտնի է, նշանաւոր վրացական գործիչ և բանաստեղծ էր։

◆ Բաթումից հեռագրում են, որ արդէն կախաղան են հանվել բժիշկ Տրիանդաֆիլիդիսի սպանութեան համար մահվան դատապարտված չորս ամբաստանեալները։

◆ Թիֆլիսումն է ներկայումս Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզէնը։

◆ Վեատկայի նահանգում վրացի աքսորականներ Ղարիբաշվիլի և Խուցիշվիլի զինված աւազակութեան համար դատապարտված են՝ առաջինը մահվան, իսկ երկրորդը ցմահ տաժանակիր աշխատանքների։

◆ Պետերբուրգում այս օրերս մեռաւ կովկասեան գեներալներից մինը—գեներալ-ադ-ինֆանտէրիի Միխայիլ Եակօվլևիչ Շալիկօվը։ Հանգուցեալի անունը կապված է Կովկասը նուաճելու պատմութեան հետ։ Մ. Ե. ծնվել է 1831 թ. Հիւսիսային Կովկասում։ Սերվելով Ստաւրօպօլի նահանգի ազնուականներից, հանգուցեալն աւարտեց Պետրօվսկի կադէտների կորպուսը և մտաւ Նիկօլաեվսկի գեներալ-շտաբի ակադեմիան, որտեղից 1850 թ. ծառայութեան մտաւ լէյբ-գվարդիայի գրենադերեան գունդը. 1858 թ. հանգուցեալը ընդունվեց գեներալ-շտաբում և նշանակվեց պաշտօնով կովկասեան զօրաբանակի գլխաւոր շտաբում. 1859—61 թ. թ. մասնակցեց լեռնականների դէմ սկսված արշաւանքներին և մի շարք կռիւներին։ 1877—78 թ.թ. նա մասնակցեց ռուս-թիւրքական պատերազմին։ Այդ ժամանակ հանգուցեալը կատարում էր Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայի պարտականութիւնները։ Թիւրքական պատերազմից յետոյ գեներալ Շալիկօվը նշանակվեց Երևանի նահանգապետ և մնաց այդ պաշտօնում 11 տարի, իսկ 1890 թւից եղաւ Քութայիսի զինւորական նահանգապետ, վարելով այդ պաշտօնը 6 տարի։ Այդ տարիներում նա իր գործունէութիւնը նուիրեց Քութայիսի նահանգի քաղաքացիական բարեկարգութեանը և բարենորոգումների գործադրութեանը։ Հանգուցեալը ստացել էր Կայսրից շնորհակալական թուղթ և պարգևատրված էր Ալէքսանդր Նևսկու շքանշանով։

◆ Նոյեմբերի 16-ից Բաթում քաղաքում նահանգապետ Ռօմանովսկու նախագահութեամբ կը սկսվեն զեմստվային խորհրդակցութեան նիստերը, որին ի թիւս միւսների մասնակցելու հրաւիրված է Մ.-ա.-ք. Մելեան։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հոկտեմբերի 20-ին ձերբակալվեցին 10-րդ քաղաքամասի պաշտօնեաների ձեռքով Էջմիածնի գ. գիւղացի Ալէքսանդր Մկրտչեանը և պարսկահպատակ Յակոբ Գասպարեանը, որոնք Թիֆլիսեցի Յակոբ Միրզայեանի խանութից, որ գտնվում է Կանենեվսկայա փողոցի վրա № 12 տանը, գողացել էին 240 րուբլու զանազան զգեստներ և կտորներ։

◆ Հոկտ. 26-ի երեկ. ժամը $9^{1}/_{2}$-ին Կախեթինսկայա փողոցի վրա 7-րդ քաղաքամասի ոստիկանութեան պաշտօնեաները շուրջկալի ժամանակ ձերբակալեցին երեք հոգու՝ Նոր-Բայազէտցի Սմբատ Միրզայեանին, Կարապետ Աղամիրեանին և Ալէքսանդրօպօլցի Մովսէս Ջանվելեանին, որոնց մօտ գտան մաուզէր սիստեմի ատրճանակ 10 փամփուշտներով։

◆ Հոկտ. 26-ին շուրջկալի ժամանակ II քաղաքամասի ոստիկանութիւնը զինւորպահակների հետ միասին ձերբակալեց 10 պարապ և անցաթուղթ չունեցող մարդկանց։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ «La Turquie»-ն հաղորդում է, որ Թիւրքիայի հայ-կաթօլիկների եպիսկոպոսները արդէն պաշտօնապէս կանչվել են Կ. Պօլիս, Թիւրքիայի հայ-կաթօլիկ համայնքի համար պատրիարք ընտրելու նպատակով։ Այդ առիթով արվող ծախսերը հոգալու է ինքը վատիկանը։

◆ Նոյն լրագիրը հաղորդում է հոկտ. 17-ից, որ Տրապիզոնի հայոց առաջնորդ Իմմանուէլ եպիսկոպոսը գրաւորապէս յայտնել է Կ. Պօլսի հայոց ազգ. պատրիարքարանին, որ Տրապիզոնի յեղափոխական կօմիտէի անդամները՝ զէնքերով զինված՝ յարձակվել են տեղական ազգ. կլուբի վրա և հրացան արձակել առաջնորդի վրա՝ կամենալով սպանել նրան։ Առաջնորդը հրաշքով է ազատվել։ Եպիսկոպոսը աւելացրել է, որ այդ բռնութիւնը հետևանք է նկատվում այն բանի, որ այդ քաղաքի յեղափոխական կօմիտէն որոշել էր թատերական մի ներկայացում տալ եկեղեցում, իսկ ինքն այդ որոշման դէմ էր գնացել։ Այս դէպքից յետոյ Իմմանուէլ եպիսկոպոսն իր հրաժարականն է ներկայացրել պատրիարքարանին։

◆ Կ. Պօլսի «La Turquie» լրագրում կարդում ենք. «Մենք անցեալ օրը հաղորդեցինք, որ Եղիշէ Թոփչեանը սպանված է։ Էրզրումի պատգամաւոր Վարդգէս էֆէնդին Դաշնակցութեան կօմիտէին ուղարկած մի հեռագրի մէջ ծանուցանում է, որ կտրուկ միջոցներ են ձեռք առնված յանցաւորներին ձերբակալելու համար։ Վալին գնաց Թօքաթ՝ քննութիւն կատարելու այդ մարդասպանութեան վերաբերմամբ, որի հեղինակները պէտք է որ եղած լինեն Հուսէյին փաշայի մարդիկ»։

◆ Մի հայ լրագրի Էրզրումից հաղորդում են, որ վեց հայեր սպանվել են Կաբինլուսում (Սամսուն) և որ զօրքեր են ուղարկված բռնելու համար այդ յանցանքի հեղինակներին։ («La Turquie»)

◆ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանի կրօնական ժողովը իր երէկվայ (հոկտ. 15-ի) նիստի մէջ խմբագրեց մի գրութիւն, որով պատճառաբանում է իր հրաժարականը, որը պէտք է այսօր (հոկտ. 16) ներկայացվի ազգ. ժողովին։ Կրօն. ժողովը այդ գրութեան մէջ այն կարծիքն է յայտնում, որ աչքի առաջ ունենալով այն անիշխանական դրութիւնը, որի մէջ գտնվում է պատրիարքարանը, փոխանակ մի յանձնաժողով ուղարկելու կառավարութեան հետ բանակցելու համար ազգի ցաւերի մասին՝ պատրիարքը պարտաւոր է ուղղակի յարաբերութիւնների մէջ մտնել կառավարութեան հետ։ Մի քանի հայ պատգամաւորներ կը դիմեն Նորատունկեան էֆէնդուն, որպէսզի նա յանձն առնէ վարչական խորհրդի անդամի պարտաւորութիւնները, և եթէ նա հրաժարվի, նրանք կը դիմեն Աղաբեան էֆէնդիին, սենատորին։

(«La Turquie»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Նախորդ օր չը գիտենք ինչ աղբիւրից լուրեր էին տարածվել, որ չը պիտի լինի հայկական ներկայացում Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան թատրօնում, մինչդեռ նա կայացաւ, ինչպէս նշանակված էր։

Խաղացին Իբսէնի «Ուրուականներ» դրաման երեք գործողութեամբ և Չեխօվի «Յոբելեան» վօդվիլը 1 գործողութեամբ։

Տիկին Մայսուրեան հոգեբանական վերլուծութեամբ բնորոշեց վերին աստիճանի տանջված, բայց և անհուն մայրական սիրով տոգորված Ֆրու Ալվինգի տիպը. Նրա խաղը ուժեղ էր յուզմունքների տեսարաններում։

Ալիխանեան հարազատ կերպով արտայայտեց կեանքի անյագ ծարաւ զգացող, բայց քայքայիչ հիւանդութեան սաղմերը իր մէջ կրող դիւրազգաց Օսվալդի տիպը։

Տպաւորիչ էր համր տեսարանը երրորդ գործողութեան մէջ մայր և որդու ճակատագրական բացատրութիւնից յետոյ։

Տիկին Գուլազեան (Ռեգինա), պ.պ. Յարութիւնեան (պաստոր) և Մամիկոնեան (հիւսն) պահպանում էին անսամբլը։

Վերջում աշխոյժ կերպով խաղացվեց Չեխովի «Յոբելեան» պիէսը Մամիկոնեանի, Գուլազեանի, Միրզոյեանի, Մելիքեանի և Ալլահվերդեանի մասնակցութեամբ։

Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաբերդ, 5 հոկտ.

Քաղաքիս ազգայիններէն Սեդրակ Մինասեան երկարատեւ բացակայութենէ մը վերջ այս անգամ իր ծննդավայրը վերադառնալուն՝ բարեհաճած է ինքնաբերաբար և բարեյօժար նուիրել Միութեանս ընթերցարանին ութսուն և չորս (84) կտոր մեծ և փոքր կարեւոր գիրքեր և պարբերաթերթերու հաւաքածոներ։

Լոկ կրթասիրական նպատակաւ հիմնուած Միութեանս համեստ ընթերցարանը կարօտ ըլլալով միշտ այսպիսի բարեսիրական ձեռնտուութիւններու, պարտք կը զգանք հրապարակաւ մեր խորհին շնորհակալութիւնն յայտնել ազնիւ նուիրատուին։

Դիւան Ընթերցասիր. Միութ. Բաբերդի

—

Մոսկվա, 15 հոկտեմբերի

Մոսկվայի համալսարանի հայ ուսանողական հայրենակցութեան վարչութիւնը այս գրութեամբ յայտնում է, որ նա ոչ մի կապ չունի այն գրութիւնների հետ, որոնք մօտիկ անցեալում լոյս են տեսել մի քանի պարբերական հրատարակութիւնների մէջ և մեղադրում են Պետական Դումայի անդամ Սաղաթելեանին, որ նա իր պարտքը չէ վերադարձնում հայրենակցութեան միութեանը, որի կասսայից օգտվել է իր ուսանողութեան օրօք։ Այդ յօդուածները, որոնք սխալ հիմունքներ ունեն, կարող են ընթերցողին մոլորեցնել և զանազան կասկածներ զարթեցնել պարոնի դէմ։

Վարչութեանս քննութիւնը, հիմնված գրաւոր դոկումենտների վրա, ապացուցում է, որ Սաղաթելեանը մէկն է հայրենակցութեան այն փոքրաթիւ պարտքատէրերից, որոնք բարեխղճօրէն կատարում են իրանց պարտականութիւնը։ Եթէ պարտքի հատուցումը (պարտքի ընդհանուր գումարը 406 ր. 45 կ. էր, որից մինչև այժմ վճարված է 251 ր.) ընդհատվել է, այդ բացատրվում է նրանով, որ հայրենակցութեան գործավարութիւնը անցեալում արտաքին հանգամանքների պատճառով շեղվել էր մի փոքր ժամանակաւորապէս իր նօրմալ ընթացքից։ Այդ հանգամանքը շփոթեցրել էր վարչութեանը, դրա հետ նաև Սաղաթելեանին, որին առաքված է եղել իր պարտքի սխալ հաշիւը, ուր մէջ է բերված ոչ բոլոր այն գումարը, որը հատուցել է պարոնը հայրենակցութեանը իր պարտքի հանդէպ։ Վարչութիւնը գտնում է Սաղաթելեանի վարմունքը դէպի հայրենակցութիւնը միանգամայն բարեխիղճ։

Վարչութեան բիւրօ՝

Նախագ. Լ. Ամիրաղեան
Քարտ. Ս. Իսրայէլեան
Գանձ. Խ. Զաքրեան

Ծանօթ. խմբ.—Այս նամակից երեւում է, որ Սաղաթելեանը, աւարտելով իր ուսումը մօտ 20 տարի առաջ, պարտք է մնցել ուսանողական կասսային 406 ր. և 20 տարվայ ընթացքում վճարել է միայն 251 ր.։ Ուրեմն լրագիրների հաղորդածը նրա մասին ճիշդ է։

—

Թիֆլիս, 24 հոկտեմբերի

Վաղաժամ մահացած Լուսիկ Տէր-Ղեւոնդեանցի վրա դրվելիք պսակի փոխարէն, ուղարկում եմ խմբագրութեանդ, Ադանայի որբերին օգնող գանձարանին 5 ր. նպաստ։ Խնդրում եմ ընդունել և հասցնել ուր հարկն է։ Գ. քահ. Գորգեանց

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Եապօնական դեսպանատանը տեղը ունեցաւ ճաշ ի պատիւ Պետերբուրգ եկած եապօնական զինուորական մասնաժողովի։ Ներկայ էին զինուորական մինիստրը, նրա օգնականը, գեներալ-շտաբի պետը և ուրիշ պաշտօնեաներ։

Մայրաքաղաքում հիւանդացան խօլերայով 11, մեռան 8 հոգի։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՈՐՕԴ։ Կօժարիխում աւազակները այրեցին երկու տուն, փլատակների տակ գտնվեցին երկու կնոջ և վեց երեխաների դիակներ։ Երեք հոգի ստացան ծանր խանձուածքներ։

ՍԻՄԲԻՐՍԿ։ Վոլգայի վրա նաւագնացութիւնը դադարեց։

ՎԻԷՆՆԱ։ Կայսրը ընդունեց Թիւրք էկսկուրսանտների պատգամաւորութեանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարեւորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար ապրանքատ.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարեւորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօստային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաքում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը

ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.

Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.

Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.

(ա. օ.) 1044. 100—20

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ներքին և ջղային հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը

ամեն օր | առաւօտեան 9—12 ժ.
| երեկոյեան 5—7 ժ.

Միքայէլեան փողոց, № 27.

(ա. օ.) 1087. 100—11

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

7 ՌՈՒԲ. 25 ԿՈՊԷԿՈՎ

ԵՐԿՈՒ ԶԳԵՍՏ!

Տղամարդկանց եւ կանանց

Ձմեռային կամ աշնանային զգեստների երկու կտոր, տղամարդկանց և կանանց համար, ճանապարհածախքը՝ պօստով ձրի—7 ր. 25 կոպէկով։ (Սիբիր՝ ճանապարհածախք 85 կ.)։ Չը հաւանած դէպքում փողը վերադարձվում է։ Տղամարդկանց կտորը 4¼ արշ.՝ Անգլիական տրիկօ, ամուր բրդից, 2 արշ. լայնութեան, նորագոյն նկարներով, և 8 արշ. տրիկօ՝ «Արկադիա», բրդից, մօդային նկարով, կանանց էլեգանտ զգեստի համար։ Երկու կտորն էլ ամեն տեսակ մութ գոյներով։ Վերադիր վճարով ուղարկվելուց՝ հաշվւում է 16 կոպ. պօստային ծախք։ Ըստ ցանկութեան՝ նոյն գնով ուղարկվում է տղամարդկանց համար երկու կամ կանանց համար նոյնպէս երկու կտոր։ Հասցէագրել՝ Фабриканту М. Бернштейну. г. Лодзь. М. (չ.) (B.67939) 1145. 3—1

ՄԻ ՏԻԿԻՆ, որ երկար տարիներ դասաւանդել է հայոց դպրոցներում ձեռագործ, կար ու ձեւ և գծագրութիւն՝ կամենում է ունենալ մի յարմար պաշտօն։ Կարող է լինել որբանոցի կառավարչուհի, խնամատար-դաստիարակչուհի, գրադարանապետուհի, մանկական պարտէզի կառավարչուհու օգնական և այլն։ Համաձայն է ուրիշ քաղաքներ գնալ։ Դիմել՝ Бебутовская ул., № 44, кв 7. Տէր-Մկրտչեանին։ (չ. ու.) 1161. 4—1

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է թողնում պտղատու ամեն տեսակի, ռուսական և տեղական լաւ տեսակի մրգատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր։

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ։

(չ. կ.) 1105. 15—3

Մանուֆակտուրային վաճառք

ՅՈՎՀ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ

Հոկտեմբերի 1-ից, Սօլօլակսկայա փողոցի վրա, «Պրովօդնիկ Ընկ.» խանութի շարքում, Ազովո-Դոնեան բանկի ներքեւում (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացված է մանուֆակտուր. ապրանքների վաճառք։ Թամամշեանի քարվանսարայից փոխադրվելով այդ նոր տեղը՝ բոլոր ապրանքը նորոգված է և ստացված են մեծ քանակութեամբ սէզօնի նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր դպրոցական հիմնարկութիւնների պաշտօնազգեստների կըտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ։

— ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ —

մահուդէ ադիալներ, պլիւշի, բայկի, պիկէի, ատլասի և կաշմիրի վերմակներ։

Բարանէ ապրանք եւ սեղանատան սպիտակեղէն

ամենալաւ ֆաբրիկաների, զարդինի տիւլ, պլիւշի սփռոցներ, թաւիշ, պլիւշ և մանչեստեր։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նուվօտէ և չիթ։ Բամբակէ գործուածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գներով։

— ՅՈՒՍՈՒՄ ԵՆՔ ԳՈՐԾԸ ՎԱՐԵԼ ԱՄԵՆ ՄԻ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ —

ԳՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Տարաք օրերը մնացորդների վաճառումն

(28, 30, 1, 3, 5) 1158. 5—1

ԿՈՉ

Բացառիկ հանգամանքները ստիպում են Փօթու հայոց եկեղեցու շինութեան Հոգաբարձութեանս խոնարհաբար դիմել բոլոր բարեսէր և բարեգործ ազգայնոց՝ ըստ չափու կարողութեան և ցանկութեան օգնել Փօթու հայոց եկեղեցու շինութեան։ Ահա 10 տարի է, որ Փօթիում չը կայ ոչ միայն եկեղեցի, այլ և մի աղօթատուն, և տեղիս հայերը, աւելի քան 800 հոգի, գլխաւորապէս բանւորներ, իսպառ զրկված են հոգևոր ու բարոյական սնունդից։ Իսկ սրանց զաւակները՝ դպրոց չը լինելու պատճառով՝ դէն էին շպրտված։ Հոգաբարձութիւնս իր ընտրված օրից ահա չորրորդ տարին է՝ չը խնայելով ոչ մի ջանք՝ աշխատում է ի կատար ածել իր ստանձնած գործը և հանգանակում է նուէրներ եկեղեցու և ուսումնարանի շինութեան համար։ Մեր դիմումը անուշադիր չը մնաց զգայուն և բարեսէր անձանց կողմից, որոնց նուիրաբերած գումարի մի մասով հոգաբարձութիւնս կառուցեց ուսումնարանի շինութիւնը, որը 1908 թւականի յունվարի 8-ից բացված է և ուր ուսանում են ձրի երկու սեռի հայ մանուկներ, իսկ մնացեալ գումարով ձեռնարկել է մի փոքր, համեստ եկեղեցու շինութեան, որի պատերը կէսից աւելի արդէն բարձրացված են. սակայն, դժբաղդաբար, վերջացաւ հանգանակած գումարը, իսկ անհրաժեշտութիւն է նկատվում մինչև ձմեռվայ վերահասը բարձրացնել ամբողջովին պատերը և կամարները և ծածկել տանիքը, այլապէս տեղական կլիմայական աննպաստ պայմաններից և ձմեռային մշտական անձրևներից կը փչանան բոլորովին եղածն էլ և դրա հետ միասին՝ թէ պատուարժան բարեգործ անձանց նուիրաբերութիւնը և թէ Հոգաբարձութեանս ամբողջ 4 տարվայ աշխատանքը։ Հոգաբարձութիւնս ոչ ֆիզիքական և ոչ էլ բարոյական ոյժ ունի անհանգստացնելու միևնոյն բարեգործ և կարեկից անձանց, որոնք ձեռք մեկնելով՝ օգնութեան հասան այս մեծ գործում, ինչպիսին է ժողովրդի մութ խաւերի լուսաւորութիւնը եկեղեցու և ուսումնարանի միջոցով. բայց կարիքը, դառն և անյետաձգելի կարիքը ստիպում է նորից ձեռք կարկառել և օգնութիւն հայցել։ Ո՜վ բարի մարդիկ, օգնեցէք վերջացնելու հայ ժողովրդի վեհութեան և պարծանաց տաճարը։ Իւրաքանչիւր մի լումայ, իւրաքանչիւր մի կոպէկ խորին անկեղծութեամբ և շնորհակալութեամբ կընդունվի, որը և իր ժամանակին կը յայտարարվի կովկասեան լրագիրներում։ Խոնարհաբար խնդրում ենք նուիրաբերութիւններն ուղարկել Փօթի՝ հայոց եկեղեցու Հոգաբարձութեան։

Նախագահ Հոգաբարձութեան՝
Անդրէաս Ապրէեան
Գանձապահ և քարտուղար՝
Ա. Թիւրքեան

(չ.) 1108. 4—2

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!

2 ր. 75 կ.։



Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» շէվիօտը, 4¼ արշ., տղամարդկանց հագուստի համար։ Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և չքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախսը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախսը մեր հաշւին։ Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО", г. Лодзь, № 15.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։

(չ.կ.) (В. 58110) 947. 0—11

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են

Երգեցողութիւն ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, գինն է 8 ր.։

(Alto) երգեցողութիւն ս. պատարագի վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 1 ր. 50 կ.։

(Basso) երգեցողութիւն ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 2 ր.։

(Soprano) երգեցողութիւն ս. պատ. վասն քառ. խառն խմբի (ի զգեստ. քահ.), 1 ր. 50 կ.։

(Tenore) երգեցող. ս. պատ. վասն եռաձ. արական խմբի (ի զգեստ. քահ.), 2 ր.։

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. 854 (չ.) 10—10

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ

30 ՄՇՏԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՎ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

Կսէնիեվսկայա փող. № 7, սեփ. տ., «ՎԵՑՑԵԼ» հիւրանոցի մօտ։

Տէլէֆօն № 590

Հիւանդներին ընդունում են հետևեալ մասնագէտ բժիշկները.

ԲԱԼԱՐՋԵՎ Լ. Ի.—երեխաների հիւ., ամեն օր, բացի կիրակի օր., 2—3 ժ. ցեր.։

ԳԱՄԲԱՇԻՁԷ Վ. Դ.—ներքին եւ երեխ., ամեն օր, բացի կիրակի օր., 11—12 ժ. ցեր.։

ԳԵԴԵՎԱՆԻ Մ. Ա.—ջղային եւ ներքին., երկուշ., չորեքշ., ուրբաթ, 10½—11 ժ. առ.

ԳՈՒՐԿՕ Ա. Գ.—ներքին, շաբաթ՝ 1—2 ժ., կիրակի՝ 11—12 ժ.։

ԿԱՐՇԻՆ Ա. Ա.—կաշուի եւ վեներ., ամեն օր, բացի կիրակի օր., 2½—3½ ժ. ցեր.։

ՄԱՂԱԼՕՎ Գ. Գ.—ներքին, երեքշ. և շաբաթ, 10—12 ժ. առ.։

ՄԱՆՍՎԵՏՕՎ. Վ. Մ.—ներքին, երկուշ., հինգշ. և շաբաթ, 1—2 ժ. ցեր.։

ՄԵԼԻՔՕՎ Ն. Մ.—վիրաբուժ. եւ կանանց, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։

ՄՈՒՍԽԵԼՕՎ Վ. Ս.—աչքի, երկուշ., չորեքշ. և ուրբաթ, 2—2½ ժ. ցեր.։

ՓԻՐԱԴՕՎ Ր. Բ.—վիրաբուժ., ամեն օր՝ 11—12 ժ. առ.։

ՊՕՊՕՎ Բ. Ա.—ականջի, կոկորդի եւ քթի, ուրբաթ, 2—2½ ժ. ցեր.։

ՌՑԽԻԼԱՁԷ Ն.—ատամի, ամեն օր՝ 9—10 ժ.

ՍՕԲՕԼԵՎՍԿԻՅ Գ. Վ.—վիրաբուժ., ամեն օր՝ 10—11 ժ. առ.։

ՏԻԿԱՆԱՁԷ Ի. Ե.—կանանց եւ մանկաց, ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։

ՖԷՕԴՈՐՕՎ Ե. Գ.—միկրոսկոպ., քիմիական և բակտերիօլոգ. վերլուծումներ։

(չ. ու. կ.) 1017. 100—21

ՎՕԿԶԱԼՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ

Երթեւեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի

Տէլէֆօն 695

Ս. ՎԱՇԱԿՄԱՁԷ ատամնաբոյժ, ամեն օր, 9—10 ժ. առ.։

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։

ԴԻԱՍԱՄԻՁԷ սիֆիլիս, վեներ. եւ կաշուի հիւ. ամեն օր, 11½—12½ ժ.

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը։

Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ, ամեն օր 12—1 ժ. բացի կիրակի օրերից, կոկորդի քթի և կանջի։

Վ. Ս. ՄՈՒՍԽԵԼՕՎ երեքշաբ., հինգշ. և շաբաթ օրերը, 1—1½ ժ., աչքի հիւանդ.

Ն. Գ. ՖԷՕԴՈՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 11—12 ժ., ներքին և երեխայոց հիւանդ.։

Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։ (չ. ու. կ.) 1032. 100—19

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱԶ" ՀԻՒՐԱՆՈՑ

Երեւանեան հրապարակ, տ. Միրզոյեանի, տելեֆոն 358.

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անպայման մաքրութիւն անդորրութիւն և հանգստութիւն, էլէկտրական լուսաւորութիւն տէլէֆօն վաննաներ։ 50 համարներ՝ 1 րուբ. սկսած։ Քաղաքավարի և չուտափոյթ աշխատող ծառայողներ։

Պ. պ. վօյաժօրներին և ամսով վարձողներին մեծ ԶԵՂՋ

ՄԵՆԻՒ

I. ճաշ՝ 2 կեր.՝ 60 կ., 1 ր. օղի և 1 ր. գինի։ II. ճաշ՝ 3 կեր.՝ 75 կ., 1 ր. օղի, 1 ր. գինի, 1 թաս սուրճ։
III. ճաշ՝ 4 կեր. 1 ր., 1 ր. օղի, կէս շ. գինի և 1 թ. սուրճ։ IV. ճաշ՝ 5 կեր. 1 ր. 50 կ., 1 ր. օղի, կէս շ. գ. և 1 թ. սուրճ։

Յարգանքով Ի. Կօրչիլայա և Ն. Սիխարուլիձէ

(օ.մ.) 870. 100—26

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1910

Կը բովանդակէ Ազգային-Բանասիրական-Գրական-Պատմական-Կենսագրական և այլ յօդուածներ։

Իր նպատակն է բարձրացնել Հայ ժողովրդի միտքը Գեղարուեստով, Գիտութեամբ, իւր Անցելոյն և Ներկային լիուլի գիտակցութեամբ։

«Բազմավէպը» իր Բանասիրական բաժնոյն հետ՝ պիտի զօրացնէ Գեղագիտական բաժինը՝ գեղարուեստական նկարներով և գրական ընտիր յօդուածներով. և ի հարկին իր սովորական ծաւալին վրայ պիտի աւելցնէ 16 էջ, որպէս զի կարենայ երկու շաբաթը անգամ մը հրատարակուիլ 32 էջերով։

«ԲԱԶՄԱՎԷՊԻ» ՆՈՒԷՐԸ.—Անոնք, որ 1909 Դեկտեմբեր 1/14-էն առաջ կը բաժանորդագրուին՝ յղելով միանգամայն 10 ֆր.—4 րուբլի—2 դոլլար—50 դահեկան՝ իբր նուէր պիտի ստանան 2 ֆր. արժողութեամբ գիրք մը (Բաժանորդաց կը յղենք գինեցուցակը)։

Բարեգործական հաստատութիւնք, Ընկերակցութիւնք, գիւղերու Ուսուցիչք, Ուսանողք, Վարժարանք կրնան ամբողջ տարեկան «Բազմավէպը» ստանալ միմիայն 30 դահեկան, 2,50 րուբլի, 6 ֆր. յղելով։ Դիմել Rédaction de la Revue «Bazmavep» Venise (Italie).

Տաճկաստանի մեր գործակալութեան կեդրոնատեղին է Սեղբոս-խան Թիւ 3։ Տաճկաստանի Բաժանորդները դրամը ուղղակի կրնան յղել հետևեալ հասցէին. Rév. P. J. Taïetzi (Հ. Եսայի Վ. Տայեցի) Seghpos-Han № 3. Galata, Constantinople.

ԳԵՂՈՒՆԻ՝ ի նպաստ Կիլիկիոյ

1909-ի «Գեղունին» իր սովորական դիրքով լոյս պիտի տեսնէ դեկտեմբերի վերջը իբր Բացառիկ Թիւ մը՝ ի նպաստ Կիլիկիոյ աղէտեալներու։ Գինն է՝ 25 դահեկան, 5 ֆր., 2 րուբլի, 1 դոլար։ Անոնք՝ որոնք իրենց թշուառ հայրենակիցներուն փոքր նպաստ ընելու տրամադիր են՝ իրենց սողին վրայ պիտի ունենան շքեղ «Գեղունին»։

«Գեղունին» պիտի զարդարուի ազգային և Եւրոպացի նշանաւոր գրագէտներու յօդուածներով, համաշխարհային գեղարուեստական նկարներով, ազգային և համազգային կեանքը պատմող պատկերներով։ (2. չ.) 1124. 2—2

200 ՌՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ

ով կասկածեցի, թէ մեր ապրանք չէ համապատասխանում գնին. 12 ր. տեղ 3 ր. 95 կ. ուղարկում ենք 17 անհրաժեշտ արժէքաւոր իր. 1) սև պողպ. ժամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ առանց քանալու լարվող ժամ., 8 տարվայ երաշխաւոր. 2) գեղեցիկ, չը սևացող շղթայ. 3) նմանակի բրէլոկ. 4) պամշի պարկ. ժամ. փչանալուց պահելու. 5) կաշուի նորաձև քսակ 6 բաժ. 6) շտեմուէտ նորոյթ—ամերիկակ. անվտանգ «Սանիտաս» ածելի, որով ամեն ոք կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկելի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. գուլպէ մատանի «Օպալ» քարով. 11) Պարիզի նորոյթ «Պլաստօգ», որը բնականօրէն ցոյց է տալիս նազան տեսարաններ. 12—17) 6 հատ հետաքրքրաշարժ նկարներ «Պլաստօգի» համար։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 գարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուն պէս, վեր. վճ. և առանց կանխավճարի։ Նոյնպիսի գարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամաց. 4 ր. 50 կ. 2-ը 8 ր. 50 կ.։ Յիշեալ գարնիտուրը փակ ծրարով՝ ցոյցով՝ 1 ր. թանգ։ Ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ.) Հասցէն Т-во ЗАРЯ Варшава.

Խնդրում ենք հասցէն կտրել և կպցնել ծրարի երեսին։

(В. 63520) 1019. 11—4

Электропечатня Ав. Мугдусіакспова съ С-ми. Большая Ванкская № 3.